24ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 6395 — 22 ՅՈՒՆՈՒԱՐ 1907 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ — 20 ԶԻԼՀԻՃՃԷ 1324 — 4 Fevrier 1907 — 24me année № 6395

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
"ԱՐԵՒԵԼՔ" ՕՐԱԹԵՐԹԻ
Կ. ՊՈԼԻՍ, ՂԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ 80 Ղրշ.
ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 108 »
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 35 Ֆրն.
ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ ՄԵՐ ՎՐԱՅ

20 հատ 1 ղրուշից փուլ
1 մեճ.ի հաշուով կ'ընդունուի

10 ՓԱՐԱ

Արեւելք

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ارەولك
درسعادتده غلطهده ارەولك غزتهسی ادارهخانهسی

DIRECTION
DU JOURNAL ARMÉNIEN
"ARÉVELK"
CONSTANTINOPLE - GALATA

10 PARAS

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆԱՑՈՅՑԸ

Առաքելական և Կաթոլիկ Հայոց Տօնացոյցները մեծ տարբերութիւն չունին իրարմէ։ Հռոմէական Հայք Ս. Երրորդութեան տօնը առանձին կը տօնեն, մինչ առաքելականք զայն Պենտեկոստէի հետ միասին կը յիշատակեն։ Կաթոլիկները Ծնունդը դեկտեմբեր 25ին կը տօնեն, մինչդեռ առաքելականք յունուար 6ին։ Կաթոլիկները մարտ 19ին և յունիս 24ին կը տօնեն միշտ Յովսէփի և Յովհաննէս Մկրտչի յիշատակը։ Բացի այս քանի մը տարբերութիւններէն, կարելի է ըսել որ Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցը թէ՛ առաքելական և թէ՛ կաթոլիկ Հայերու համար եկեղեցական տօներու և հանդէսներու հիմը կը կազմէ։ Կաթոլիկ Հայոց Տօնացոյցի մասին ուսումնասիրութիւն մը հրատարակած է Հ. Նիքոլաս Նիլ իր կարեւոր Calendarium manuale utriusque Ecclesial Orientalis et Occidentalis = Առձեռն Տօնացոյց արեւելեան և արեւմտեան Եկեղեցւոյ (Ինսպրուք. 1897. տ. էջ. 553—639)։ Հ. Թօնտինի և Հ. Նիքօլասի գործերը իրար կը լրացնեն։

Իր ուսումնասիրութեան առաջին մասին մէջ Հ. Թօնտինի կը խօսի Հայոց տօներու մասին ընդհանրապէս և նկատի կ'առնէ հետեւեալ պարագաները։ Հայոց եկեղեցական Տօնացոյցը միւսներէն արմատապէս կը տարբերի անով որ անոր բոլոր տօները շարժական են բաց ի 6 մեծ տօներէ որոնք հետեւեալներն են.

Ա. Ծնունդ, յունուար 6ին.
Բ. Տեառնընդառաջ, փետրվար 14ին.
Գ. Աւետումն Ս. Աստուածածնի, ապրիլ 7ին.
Դ. Ծնունդ Ս. Աստուածածնի յԱննայէ, սեպտեմբեր 8ին.
Ե. Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն, նոյեմբեր 21ին.
Զ. Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ, դեկտեմբեր 9ին.

Ուշագրաւ է այն պարագան որ 6 տօներէն 4ը Ս. Աստուածածնին վերաբերող տօներ են և ասոնցմէ «Ծնունդ Ս. Աստուածածնի» ԺԳ. դարուն և վերջին երկուքը երկու երեք դար առաջ ներմուծուած են Հայ Տօնացոյցներու մէջ։

Հայ Եկեղեցին հին ատեններէ ի վեր ընդունած է տօներու շաբաթական դրութիւնը։ Այսպէս, օրինակ, բոլոր Կիրակիները նուիրուած են Յարութեան յիշատակին։ Միմիայն տէրունական տօները կրնան կիրակի օրերը տօնուիլ. Քրիստոսի Ծնունդեան և Մարդեղութեան տօներուն հետ Մարիամ Աստուածածնի, Խաչի և Եկեղեցւոյ տօները կ'իյնան կիրակի օրեր։

Շաբթուան բոլոր Ուրբաթները նուիրուած են Քրիստոսի Խաչելութեան. այս պատճառաւ կերակուրի նկատմամբ պահեցողութիւն կը պահուի չարաչարանքներն ու աղօթքները ապաշխարութեան են։ Ուրբաթ օրերը տէրունական տօն մը կարելի է տօնել, բայց ոչ երբեք սրբոց յիշատակ մը կատարել։ Նոյնը պէտք է ըսել Չորեքշաբթիի համար, որ Աւետման և Մարդեղութեան օր կը համարուի։

Այս բացատրութիւններէն ալ բացայայտ կ'երեւայ որ Չորեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը սրբոց տօն մը կատարել կարելի չէ։ Չորեքշաբթի կը սկսի Յայտնութեան մեծ խորհուրդի աւետումով, ուրբաթ կ'աւարտի Յիսուսի երկրաւոր գործունէութիւնը և կիրակի Յարութեան փառաւոր յիշատակը կը տօնուի։

Երբ տէրունական տօն մը Սրբոց տօներուն յատկացեալ օր մը իյնայ, այն ատեն սուրբին տօնը ուրիշ օրուան կը յետաձգուի։ Տարուան մէջ մի միայն 122 օր կրնայ Հայ Եկեղեցին Սրբոց յիշատակը տօնել, այս պատճառաւ ալ շատ մը սուրբեր մէկ օրուան մէջ կը տօնուին։

Տարուան բոլոր օրերը կը բաժնուին երեք մասերու։ Անոնք կամ տէրունի են կամ սրբոց յիշատակին նուիրուած են և կամ պահոց օրեր են։ Սրբոց տօները տէրունականներու չափ հանդիսաւորութեամբ չեն տօնուիր։ Բոլոր սուրբերու համար առանձնայատուկ շարականներ չկան։ Անոնցմէ շատերու համար առաքելոց, մարգարէից, հայրապետաց եւայլն ընդհանուր շարականները կ'երգուին։

Առաջ Հայ Եկեղեցւոյ մէջ կը գործածուէր եգիպտականին և պարսկականին նման տոմար մը։ Այս տոմարին համաձայն ամէն ամիս 30 օր ունէր, որով 360 օր կը գոյանար և մնացեալ օրերն ալ յաւելեաց կոչուած ամսուն մէջ կը ներմուծուէին։ Այսպէսով ամէն տարի 6 ժամ կ'աւելնար, քանի որ տարին միշտ 365 օր կը համարուէր։

Այս հաշուով 4 տարին անգամ մը օր մը և 1460 տարուան մեծ շրջանին մէջ ամբողջ տարի մը մէջ կը խաղար։ Եգիպտական Սօթիսի կամ Սիրիուսի շրջանը կը սկսէր երբ Սօթիսի ծագումը եգիպտական Թօթ ամսուան 1ին կ'իյնար, որ Եգիպտացիներու համար եգիպտական տարւոյն առաջին օրն էր։ Իտելէռ իր դարագլուխ կազմող երկասիրութեան մէջ (Handbuch der mathematischen nnd technischen Chronologie, Ա. էջ, 126—7) խիստ շահեկան տեղեկութիւններ կը հաղորդէ եգիպտական տարւոյ մասին մէնելով կենսօրինոսի լատինական մէկ հատուածը, ուր կ'ըսուի թէ եգիպտական տարին 365 օր ունէր և 1460 օրուան շրջանը annum magnum կը կոչուէր։ Եգիպտացիք և Հայ եկեղեցւոյ վարդապետները 1460 տարիներու մեծ շրջանէն ետքը տարի մը կ'աւելցնէին, այնպէս որ եգիպտական 1461 տարիներ Յուլեան 1460 տարիներուն հաւասար կ'ըլլային և այս ձեւով երկնային մարմիններու շարժումներու վրայ հիմնուած տոմարագիտութիւնը անխախտ կը մնար։ Լուսաւորչի օրով Նիկիոյ ժողովի որոշմանց համաձայն Յուլեան տոմարը Հայ եկեղեցին ընդունեց։ Յոյն և Հայ եկեղեցիները ընդհանրապէս Զատիկը միաժամանակ կը տօնէին. միայն Դիոնիսեան կոչուած 532 տարիներու շրջանին մէջ Յոյները 4 անգամ Զատիկը ապրիլ 6ին կը տօնէին, մինչ Հայերը ապրիլ 13ին։ Այս տարբերութեան ալ պատճառը տարւոյն վերադիրն էր, որուն համաձայն լուսնական ամսոյ 14ը ապրիլ 6ին կ'իյնար. հետեւաբար Հայ եկեղեցին յաջորդ կիրակին ապրիլ 13ին Զատիկ կը տօնէր, մինչ Յունաց հաշուով լուսնական ամսոյն 14ը ապրիլ 5ին կ'իյնար և այս պատճառաւ յաջորդող կիրակի օրը ապրիլ 6ին Զատիկ կը տօնէին։ Այսպիսի տարբերութիւններու պատճառաւ մեծ վէճեր ծագեցան Հայոց և Յունաց մէջ 1634, 1729 և 1824 թուականներուն։ Տարբեր օրեր պիտի տօնեն Հայ և Օրթոտոքս եկեղեցիներ Զատիկը 2071 շնորհաց թուականին, եթէ այժմէն այդ տարբերութիւնէն խուսափելու համար ջանք չըլլան։

Այժմեան Հայ Տօնացոյցի համաձայն մեր Զատիկը շարժական է և կրնայ Մարտ 22էն մինչեւ Ապրիլ 25 գտնուող կիրակիներէն որ և է մէկուն մէջ տօնուիլ։ Այս 35 օրերու բոլոր տօներն ալ շարժական են և կախում ունին Զատկական կիրակիէն։ Այս տօներէն ոմանք Զատկէն առաջ, ոմանք ալ Զատկէն ետքը կը տօնուին։ Բացի այս օրերէն, մենք ունինք Զատկական շրջան մը, որ երկու մասերու կը բաժնուի, Զատկէն առաջ և ետքը, որ Յառաջաւորաց Պահքով կը սկսի և մինչեւ Զատիկ 10 շաբաթ կամ 70 օր կը տեւէ։ Յառաջաւորացէն ետքը երրորդ կիրակին Բուն Բարեկենդանն է, որ անմիջապէս Մեծ Պահքէն առաջ կը տօնուի։ Զատկական երկրորդ շրջանը 14 շաբաթ կամ 98 օր կը տեւէ Զատկէն ետքը։ Զատկէն 7 շաբաթ ետքը կը տօնուի Պենտեկոստէի կամ Հոգեգալստեան տօնը և ասկէ ալ 7 շաբաթ ետքը Վարդավառի կամ Այլակերպութեան տօնը կը տօնուի։ Զատկական այս երկու շրջաններուն տօներն ալ իրարու կը յաջորդեն առաջուընէ որոշուած ձեւով մը։ Ամբողջ Զատկական շրջանը կը տեւէ 168 օր կամ 24 շաբաթ և կը սկսի կամ Յունուար 11էն և կամ Փետրուար 15էն և կը տեւէ մինչեւ Յունիս 28 կամ Օգոստոս 1։

Հայ Եկեղեցւոյ տօներու շարժական երկրորդ մեծ շրջանը 22 շաբաթ կը տեւէ։ Այս շրջանին մէջ կ'իյնան Վերափոխման և Խաչվերացի տօները, որոնցմէ առաջինը սովորաբար Օգոստոս 15ին կը կատարուի և երկրորդը Սեպտ. 14ին, եթէ այս օրերը կիրակիի հանդիպին. ապա թէ ոչ, Նախընթաց կամ յաջորդ կիրակիներուն կը տօնուին։ Վերափոխման տօնին շրջանը 5—6 շաբաթ կը տեւէ մինչեւ Խաչվերաց, այսինքն Օգոստ. 5—11էն մինչեւ Սեպտ. 11—17։ Խաչվերացի շրջանը կը տեւէ 9—10 շաբաթ, մինչեւ Նոյեմբեր 5—21։ Ապա Յիսնակաց շրջանը կը սկսի մինչեւ Ծնունդ։

Այս ուղղութեամբ Հ. Թօնտինի կը խօսի երկու մեծ շրջաններու ենթաբաժիններու մասին։ Կը շեշտէ Տօնացոյցի միանմանութեան անհրաժեշտութիւնը։ Հ. Թօնտինի իր գրքի Ա. մասին վերջին գլուխներուն մէջ ջանք կ'ընէ բոլոր քրիստոնէական եկեղեցիներու Զատիկը համաձայնեցնելու համար։ Իր ուսումնասիրութեան երկրորդ մասին մէջ Հ. Թօնտինի կը զբաղի Հայ Եկեղեցւոյ տօներու մանրամասն դասաւորութեամբ, որոնք մեծ մասամբ օրացոյցներէ քաղուած են և Արեւելքի ընթերցողներուն համար մեծ շահեկանութիւն մը չունին։

ՍԿԵՊՆԵՑԱՍԻՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԺԷ.

Իրաւ է թէ Վարչական արձակուրդի օրերը լրացան, և ինծի մանր մունր զբաղումներ չեն պակսիր, բայց նախ զուարճախառն հարկի մը ներքեւ կը գտնուիմ, բարեբախտաբար, հաստատելու սա պարզ պարագան թէ Կազմական Կանոնագիր և Կրթական Ծրագիր՝ իրարմէ բոլորովին տարբեր բաներ են, ինչ որ սակայն իրարու հետ բոլորովին շփոթած գտանք տեղական թերթի մը մէջ։ Այս շփոթութիւնը ծագում տուած է ուրիշ կարգ մը շփոթութեանց, որ շղթայակապ յառաջ գացած են մինչեւ... անստուգութիւն։ Շփոթութիւնները փարատելու չպիտի աշխատիմ, այլ պիտի ջանամ անշփոթ պատմել,—մի՛ վախնաք, շատ համառօտ,— Կազմական Կանոնագրին և Կրթական Ծրագրին... ժամանակակից տարեգրութիւնը, աւելի՛ ճաւաստի աղբիւրներէ քաղ հանելով մեղմօրէն։

Նախկին Ուսումն. Խորհուրդը, որուն երկամեայ պաշտօնավարութիւնը դադրած էր 1896ի հոկտեմբերին, Կազմական Կանոնագիր մը պատրաստած և, յետ Վարչական վաւերացման, տպագրել տալով դրած էր ի գործադրութեան։ Իր Յաջորդը, Նախորդ Ուսումն. Խորհուրդը, որուն պաշտօնավարութիւնը տեւած էր տասը տարի, 1896-1906 պատրաստ գտած էր վաւերացեալ Կանոնագիրը և ըստ այնմ սկսած էր գործադրել զայդ. Նախակրթութեան Վարչական հրահանգները, միայն երբեմն երբեմն բարեփոխելով Կանոնագրին այս կամ այն յօդուածը, զոր սրբագրելի կը համարէր իր բազմամեայ փորձառութենէն թելադրուած, մինչ, աւելորդ է ըսել, կեդրոն. Վարչութեան վաւերացմանը ենթարկել է յետոյ, ըստ օրինի։ Այս է Կազմական Կանոնագրին պատմութիւնը, որ ընաւ չփոթ կէտ մը չի պարունակեր իր մէջ։

Իսկ Կրթական Ծրագիրը, զոր Նախորդը իր Նախորդէն ժառանգած էր ձեռագիր և առանց Վարչական վաւերացման, 1897ին Նախորդ Վարչութեան Խառն Ժողովէն վաւերացնել տալէ յետոյ, փոյթ տարած էր անոր անմիջական գործադրութեան ըստ կարելւոյն։ Ինքը որդեգրած ըլլալով Ծրագիրը, իբրեւ իր Նախորդէն խնամով պատրաստուած գործ, զոր չէր ուզած վերաքննել՝ վերաքննութեան անհրաժեշտ պէտք մը չտեսնելով անոր մէջ հաւաքական համոզմամբ, մա՛նաւանդ որ նոյն ատենուան դպրոցներու վիճակը անմիջական կ'ընէր միօրինակ Ծրագրի մը հրատարակումը, փութով տպագրել տուաւ զայն ու Պատրիարքական շրջաբերականով յղեց ամէն դպրոց ի գործադրութիւն։ Արդէն Խառն Ժողովն ալ առանց ընդ երկար քննութեան վաւերացուց այն ատեն ներկայացուած Ծրագիրը, և Նորին Բարձր Սրբազնութիւնը, Տ. Օրմանեան Պատրիարք, իր իսկ ստորագրութեամբ հրամայեց անոր գործադրութիւնը, իբրեւ Կրթական օրէնք, բոլոր նախակրթարաններու համար միակերպ ու պարտաւորիչ.—մինչդեռ Կազմական Կանոնագրին վաւերացումը կատարուած էր նախկին Վարչութեան օրով, և անոր գործադրութիւնը հրամայած էր Հոգելոյս Աշըքեան Տ. Խորէն Պատրիարք։

⁂

Հասկցուեցա՞ւ հիմա թէ Կազմական Կանոնագիր և Կրթական Ծրագիր... երկու քոյրեր են կրնայ ըսուիլ թերեւս, բայց ո՛չ իսկ երկուորեակ, այլ տարբեր ժամանակի ծնունդ, տարբեր աւազանի մէջ մկրտուած և բոլորովին այլազան բնութեամբ. առաջինը՝ զուտ վարչական, երկրորդը՝ միայն ուսումնական.— պարագայ մը՝ զոր այսօրուան օրս, տասը տարիներէ յետոյ, հարկ կը զգամ բացատրելու հրապարակաւ ի տեղեկութիւն... բազմամեայ խմբագիրներու, որոնք երբեմն երբեմն կրթական խնդիրներով կը սիրեն զբաղիլ՝ անգէտ ըլլալով հանդերձ ամենանախանօթ իրողութեանց։

Իսկ թէ 1897ի վաւերացուած Կրթական Ծրագիրը, ցայսօր ի գործադրութեան մեր բոլոր նախակրթարաններուն մէջ, նախորդ Ուսումն. Խորհրդէն վերաքննուելով հանդերձ՝ ընաւ փոփոխութիւն չէ կրեր, այլ միայն 6 տարին 8 տարուան վերածուեր է, մինչեւ անգամ Վարչութեան Ս. Նախագահը դիտողութիւններ ուղղեր է Նախորդ Խորհրդին, ըսելով թէ «Ինչ հարկ կար այնքան խնդիր ընելու վերաքննութիւնը, երբ եղած փոփոխութիւնք աննշան բան մ'են», եւայլն. ասոնք բոլորը, և որ ի կարգին, զարմանահրաշ առասպելներ են տող առ տող, բառ առ բառ, տառ առ տառ, ինչպէս կը հաւաստեմ ամենաստոյգ տեղեկութեամբ։

Ս. Պատրիարք Հայրը նախագահած էր Ուսումն. Խորհրդի այն նիստին՝ ուր վերջնապէս որոշում տրուեցաւ վերաքննել Կրթական Ծրագիրը, և նոյն ինքն Նորին Սրբազնութեան առաջարկութեամբն էր որ վեց տարին ութի վերածել որոշեց Խորհուրդը, և ըստ այնմ ձեռնարկեց, իբր երկու տարի առաջ, հարկ տեսնուած բարեփոխութեանց։

Ուրիշ անգամ թերեւս անդրադառնամ աւելի մանրամասնօրէն և աւելի... շուրջբոլորօրէն խօսիլ Կրթական Ծրագրին վերաքննութեան պարագաներուն վրայ. բայց այժմ բաւական ըլլայ ըսել թէ ծանօթ Ծրագիրը ո՛չ «անճանաչ», այլ բոլորովին ՀԻՄՆԱԿԱՆ փոփոխութիւն կրած է, և Նախորդ Ուսումն. Խորհրդի բոլոր անդամներէն ստորագրուած պաշտօնագրով մը մատուցուած է Պատ. Խառն Ժողովի Ատեն. Նախագահին։ Միայն Ծրագրին Մանկավարժական կամ Ծաղկոցի բաժինը տասնապատիկ ընդարձակուած է 1897ի Ծրագրին Մանկապարտէզի մասէն։ Աւելորդ կամ նուազ համեմատութեամբ՝ նաեւ միւս մասերը, ինչպէս ըսի, երկու տարուան յաւելուածով, որով հարկ չէ թողուած ո՛չ բարձրագոյն Նախակրթութեան Ծրագրին և ոչ Լրացուցիչ միամեայ կամ երկամեայ դասընթացքներու նշանակման, քանի որ նոր Ծրագիրը ամէն բան կը պարունակէ իր մէջ։ Առնուած են հին Ծրագրէն այնպիսի կէտեր՝ որ օգտակար ու կարեւոր գտնուած են ևն յաջս Նախորդ Ուսումն. Խորհրդին։

Արդ Ուսումն. Խորհուրդը,—առ որ վերադարձուած է Նոր Ծրագիրը՝ որպէս զի Նորոգ անդամակիցներն ալ աչքէ անցունեն և, եթէ ունին, իրենց դիտողութիւնը մատնանշեն,— կը սպասէ Նոր Ծրագրին վաւերացման և Նորին Սրբազնութեան կողմէն ի գործադրութիւն դրուելուն։ Այս ժամանցին մէջ նոր Ուսումնական Խորհուրդը մեղադրութեան բաժին չունենար թերեւս։

⁂

Իսկ օրուան մանր մունր լուրերու կարգին մէջ... խոշոր լուրն է Տ. Մուշեղ Եպիսկոպոսի նամականին, զոր քանի մը տարի ի վեր կը տեղացնէ Ատամայէն իր նորընծայ ապաստանին, խիզախ պայքար մը մղել փորձելով Կեդրոն. Վարչութեան Կրօն. Ժողովին դէմ։ Տ. Սահակ Կաթողիկոսի այս նորընծայ ձեռնասունը, կարծես իր ուսերէն՝ Եկեղեցւոյ նուիրապետական կարգին պարտական եղած հնազանդութիւնը թօթափելու յուսով(*) էր որ ջանաց ու յաջողեցաւ չաքալ-բագը անցընել իր գլուխը։ Չեմ կրնար նախատեսել թէ Ազգ. Վարչութիւնը ո՞ր՛վ իմք եղանակաւ պիտի ուզէ վախճան տալ այս եպիսկոպոսին նամակագրական չհաստատալութեանց, որ վերջ ի վերջոյ մեղադրանքի մօտ բան մը կը սպառնան բերել Տ. Սահակ Կաթողիկոսի այս հապճեպ ձեռնադրութեան։

⁂

Այսպէս ցաւալի լուր մըն էր, անցեալ շաբթու, արագահաս վախճանը Յակոբ Ոսկանի, աւելի քան կիսադարեան արդիւնաշատ վարժապետին և անխոնջ ուսուցչապետին, որ և եղած է բարի հայր բարեխնամ զաւակաց։ Հինգ-վեց տարի առաջ իմ Նօթերուս մէջ, Ստեփան Ոսկանի նորափակ գերեզմանին վրայ Վենետիկի վանքէն թուղ ու մուր թափուած պահուն, — վասն զի Նորամեռն Ստեփան Ոսկան օրին մէկը Մխիթարեանց դէմ քննադատական մը ստորագրած էր ու... մեղքը մտած, թէպէտ և Ղազիկեան անուանեալ կարգախոյս վարդապետը արժանանալ փորձած ըլլար Ալեքսանդր Երեցեան ծանօթ բանասէրին յիշատակը, համարտօրէն, յետ մահու, երբ երկիւղ չունէր պատասխան ստանալու ողբացեալ գրագէտին գերեզմանէն, — առիթ ունեցած էի ես այն ատեն դիտել տալու՝ թէ Յակոբ Ոսկան կը մնար առանց Յոբելեանի, մինչդեռ և՛ արդեամբ և՛ ժամանակով արժանաւորագոյնն էր ի յոբելեարս, քանի որ աւելի քան կէս դար շունչ սպառած ու գրիչ շարժած էր իր համայնքին մէջ, մինչեւ ի խոր ծերութիւն, — զոր անա իջեցուց իր գերեզմանը և անհետացաւ ինքը մեր կենաց հորիզոնէն, ոչ իսկ կապարեայ յոբելեանով մը պսակուած։ Ինչ քաջալերանք բազմամեայ կրթական աշխատաւորներու։

ՍՐԻՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

ՌԱՅԽՍԹԱԳԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գերմանիոյ մէջ յառաջիկայ երեքշաբթի կատարուելիք համեմատականի ընտրութիւնները քուէարկութեան առաջին շրջանին չափ շահեկան պիտի ըլլան, թէև զանազան կուսակցութեանց դիրքերը հիմա բացորոշապէս ճշդուած ըլլան։ Ազատական կուսակցութեան խումբերը միթէ պիտի պահե՞ն իրենց շահածը և ընկերվարականներու պարտութիւնը վերջնական պիտի ըլլա՞յ։ Այդ ամէնքը կախում պիտի ունենայ կաթոլիկ Կեդրոնէն, վասն զի, ամէն բան նկատի առնելէ ետքը, սա խիստ տարօրինակ արդիւնքը ձեռք կը բերուի թէ այն կուսակցութիւնը որուն մեծապէս վնասել կ'ուզէին, քուէարկութեանց երկրորդ շրջանին կացութեան տէրն է։ Եթէ Կեդրոնը կ'ուզէ ոյժ տալ ընկերվարական ընտրելիներու, հոն ուր ատոնք ազատականներու կամ պահպանողականներու հետ դէմառդէմ կը գտնուին, այդ պարագային տէմոքրատ-ընկերվարականները քիչ մը յաջողութիւն ունին՝ քուէարկութեան առաջին շրջանին մէջ իրենց կորսնցուցածները շահելու։ Կղերականներու և ընկերվարականներու ընտրական այդ համաձայնութիւնը կրնայ նպաստաւոր արդիւնք մը չունենալ, սակայն առաջին անգամը չէ որ Գերմանիոյ մէջ այդ տեսակ բան մը կը պատահի։ Հիմա կեդրոնը շատ առանձնայատուկ կացութեան մը մէջ կը գտնուի, վասն զի նախարարութեան հետ յարաբերութիւնները խզած է և չի

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ (54)

ԺԻՒԼ ՄԱՐԻ

Գեղանի Կոմսուհիի մը ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԳԱՅԼԵՐՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿԸ

Ը.
ՌՈՒԱՆՍՈՄՈՆԹԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Կոմսը չէր նշմարեր որ երբեմնի պէս կը դողդղէր Սիւզան, իբր թէ միակ բառ մը բաւ ըլլար վերահաստատելու երբեմնի ամուսնական մտերմութիւնը։

Կոմսը, շնչահատ կը շարունակէր.

—Եթէ երբեք այդ ապացոյցը ունենայիր ձեռքիդ մէջ, ինչո՞ւ լուռ մնացիր այսքան ատեն... Այդ լռութիւնն է որ կը փութացնէ մահս։

—Երբ այդ ապացոյցը ընծայիմ, այն ատեն պիտի հասկնաս թէ ինչո՛ւ համար այսքան երկար ատեն լուռ մնացի։ Նախ կարծեցի որ իմ համակերպող ընթացքս և արցունքներս պիտի յաղթէին քու անգթութեանդ։ Այո՛, երկար ատեն աս հաւատքն ունեցայ թէ կեանք մը չի կրնար մշտնջենական կեղծիքով մը և անպատուութեամբ տոգորուած մթնոլորտի մը մէջ ապրիլ, և թէ անխոհեմութիւն մը ուշ կամ կանուխ երեւան պիտի հանէր այդ կեղծիքն ու անպատուութիւնը... Հաւատացի այդ բանին... Այդ յոյսով և անուրջով ապրեցայ... Ամէն առտու դէմքդ ու աչքերդ կը դիտէի ուշադրութեամբ, մտովի հարցնելով թէ արդեօք ճշմարտութիւնը չէ՞ր ընդնշմարած անքնութեան գիշերներու մէջ... Բայց ատանկ բան մը չեղաւ երբեք...

—Ապացոյցը տուր, կը կրկնէր կոմսը... Քիչ մը առաջ ըսիր թէ կրնաս ապացուցանել քու անմեղութիւնդ, Մարսէլիի վայրագ կեղծիքը, այդ աղջկան բուն իմ զաւակս ըլլալը, և իմ բռնած ընթացքիս պատճառաւ դահիճ մը ըլլալս։ Ապացո՞յց մը։ Կը յաւակնի՞ս ապացոյց մը ընծայել։ Ուրեմն ինչո՞ւ լուռ կը մնաս... խօսէ՛, խօսէ՛, եթէ չես ուզեր որ նոր և ողորմելի սուտ մը չնկատեմ խօսքդ...

Սիւզանի աչքերը պլպլացին։

—Լուռ կը մնա՞մ... ինչ, տակաւին կը ջանա՞ս խաբել զիս։

—Ոչ, չեմ ուզեր խաբել... Զաւկիս երջանկութեան վրայ կ'երդնում... բայց ասկէ աւելի սոսկալի երդում կարելի չէ ընել... Երբ ուզած ապացոյցդ տամ, երբ ալ ես չտարակուսիս իմ վրաս, այն ատեն շատ պիտի զղջաս՝ այդպիսի միջոցի մը դիմելու հարկադրած ըլլալուդ համար զիս... այնպէս որ կեանքիդ մնացեալ մասը պիտի թունաւորուի, երբ մտքիդ առջեւ բերես բռնած ընթացքդ... Ահա ինչո՛ւ համար կը վարանիմ և միեւնոյն ատեն կը վախնամ...

—Ինչ ըսել կ'ուզես։

—Չեմ կրնար բացայայտ կերպով պարզել...

—Ինչո՞ւ համար այդ ապացոյցը այնքան աղէտներու պատճառ պիտի ըլլայ։

—Միակ դժբախտութիւն մը առաջ պիտի բերէ, բայց այդ դժբախտութիւնը ամէնուն ալ պիտի վնասէ...

—Չեմ հասկնար ձեր միտքը...

Սիւզան թախանձագին շարժում մը ըրաւ և ձեռքերը վեր բարձրացուց։ Իր նայուածքին մէջ աննուն խռովք մը կար։ Ինչ որոշման յանգած էր երկար ատենէ ի վեր։ Շա՞տ ողբերգական բան մըն էր որ վերջին պահուն կ'ընկրկէր անէ։

—Բան մը չեմ հասկնար ձեր ըսածէն, և կը տարակուսիմ...

Կոմսին մէջ արթնցած յոյսը կը սկարմնար տակաւ։ Այդ ամէնը կատակերգութիւն մը չէ՞ր միթէ... ինչ բանի հաւատալու և ո՞րուն վրայ վստահելու էր ուրեմն։

—Սիւզան, ապացոյց մը տուէք, և բոլոր տառապանքներս պիտի մոռնամ. ո՛չ ևս իմ կանխահասօրէն հիւանդոտ վիճակս, որուն պատճառը դուք եղաք... այն յամրընթաց մահը, որուն յառաջացումը տեսայ այն օրէն ի վեր երբ օրհասականը իր անկողնին մէջ ամբաստանեց ձեզ... Սիւզան, ապացոյց մը տուէք, և ես պիտի օրհնեմ ձեզ։ Երբեմնի կորովս, զուարթութիւնս և երջանկութիւնս պիտի գտնեմ նորէն. կեանքը, վերջապէս ճշմարիտ կեանքը պիտի ապրիմ, փոխանակ այս երկար Գողգոթայէն վեր ելլելու։

—Այդ թշուառականն ալ ապացոյց մը չտուաւ, սակայն հաւատացիր անոր խօսքին...

—Քանի որ իր վերջին խօսքն էր ան մեռնելէ առաջ, չէր կրնար ստել։

Յափշտակուած երեւոյթ մը առաւ Սիւզան։

Ու երրորդ անգամ ըլլալով, տարիներ յետոյ, խուլ ձայնով մը միեւնոյն խօսքերն ըրաւ կոմսուհին, որոնք կասկածի կ'ենթարկէին զինքը և կռահել կուտային յուսահատ մօր մը երեւակայութեան մէջ յղացուած անիմաստ ծրագիրը։ Սիւզան յարեց.

—Այո՛, օրին մէկը ըսիր ինծի. «Մեռնող մարդը չի ստեր։» Միտքս պահեցի այդ խօսքը... հարկ է որ մեռնիմ՝ ուղղամտութիւնս ապացուցանելու համար, այնպէս չէ՞... Ետքոյ պիտի հաւատաս իմ խօսքիս, բայց շատ ուշ պիտի ըլլայ... Հիւանդ՛ր, չպիտի ստորագրես այն թուղթերը որոնք ժառանգութենէ կը զրկեն աղջիկդ...

—Ձեր աղջիկն է, Սիւզան, և ո՛չ թէ իմինս, մինչեւ որ չընծայէք այն ապացոյցը՝ որուն կը սպասեմ...

Սիւզան հառաչեց... Մահը, տգեղ մահը կը ցցուէր իր աչքերուն առջեւ... Միթէ իրաւունք չունէ՞ր վարանելու, վերջին քայլն առած ատեն։ Բայց ինչ որ վարանում կը պատճառէր իրեն, վախի զգացումը չէր — այսինքն ֆիզիքական տառապանքի վախը, — այլ իր Ռօզ-Լիզօնը անպաշտպան ձգելու երկիւղը... Ինչ պիտի ըլլար աղջկան վիճակը, երբ մայրը անհետանար... Մօր սոսկալի խոստովանութիւնը պիտի փարատէ՞ր կոմսին կասկածները։ Կամ թէ այրին, խորամանկ ու ճարտար, չպիտի՞ յաջողէր հիւանդոտ կոմսին վրայ ձեռք ձգելու իր նախկին ազդեցութիւնը...

Սիւզան այդ խաւարչուտ ճամբուն մէջ կը խարխափէր։

Կոմսը թիկնաթոռին յենարանին վրայ կրթնեցուց իր յոգնած գլուխը։

—Սիւզան, օրհնել պիտի ըլլաք այն օրը երբ ձեր յարատեւ սիրոյն և հաւատարմութեան ապացոյցը ընծայէք ինծի... Մինչեւ հիմա իրարմէ հեռու կ'ապրէինք... Եթէ իրաւցնէ կարենաք ապացուցանել ձեր անմեղութիւնը եւ եթէ չէք ուզեր քէնիս խնդալ, ձենէ կախում ունի մեր ամուսնական քաղցր կեանքին վերսկսումը...

Յետոյ կոմսը նշան մը ըրաւ որ կ'ուզէր առանձին մնալ։

Սիւզան պահ մը վարանքն ունեցաւ ի գործ դնելու իր ծրագիրը, և ամբողջ այդ իրիկունը մնաց ամուսնոյն աչքին տակ։

Բայց կոմսուհին չըրաւ այդ բանը։

Մտովի ըսաւ.

—Ո՛չ, այսօր, այլ Ռօզ-Լիզօնը անգամ մըն ալ և վերջին անգամ համբուրելէ յետոյ։ Այնուհետեւ աւելի քաջութիւն պիտի ունենամ...

Երկու օր յետոյ, կոմսուհին ըսելով թէ Էբինալի արշաւին ներկայ պիտի գտնուի, դղեակէն դուրս ելաւ, Ռօզ-Լիզօնը տեսնելու համար։ Մայր ու աղջիկ ներկայ գտնուեցան ժամադրութեան։ Մինչեւ իրիկուն մէկտեղ անցուցին։ Սիւզանի համար հեշտալի ու երջանիկ օր մը եղաւ այդ օրը։ Հարիւր օրուան կեանք մը ապրեցաւ այդ օրը, գիտնալով որ իր վերջին օրն էր։ Ներուժ տենդով մը կը շարժէր Սիւզան, այնպէս որ Լիզօն քանիցս մտահոգութեամբ հարցուց.

—Ինչ ունիք, մայր։

—Բան մը չունիմ։ Երջանիկ եմ քան որչափ չէի եղած երկար ատենէ ի վեր, որովհետեւ քու քովդ կը գտնուիմ, և անվրդով կերպով կը վայելեմ քեզ։ Ո՛չ ոք մեզի ուշադրութիւն կ'ընէ։ Անոնք որ մեզի կը հանդիպին և կը ճանչնան, սա կարծիքը կը յայտնեն, մեր փոխադարձ սէրը տեսնելով. «Աւասիկ մայր ու աղջիկ։»

(Շարունակելի)

կրնար վերստին շնորհ գտնել որքան ատեն որ հակառակի դաշինքին քաղաքականութեանը՝ գաղթային գործերու մէջ. ուստի գործելու ամէն եղանակ տրամաբանօրէն ներելի է անոր, երբ առանց կարենալ ձեռնտու ըլլալ իր դիրքը զօրացնելու իբրեւ ընդդիմադիր։ Ուրիշ կերպով խօսելով, Կեդրոնին շահը չի պահանջեր տեսնելու ակարացումը այն խումբերուն, որոնք իրեն պիտի օգնեն ընդդիմադիրի դեր կատարելու նախարարութեան հանդէպ։ Եթէ առանձին մնայ, իր ընտրութիւնը ազդեցութիւն մը պիտի չունենայ, մինչդեռ թուական առաւելութիւն վայելող ուրիշ խումբերու աջակցութիւնը եթէ վայելէ, կրնայ զօրաւոր ըլլալ եւ հարկադրել նախարարութիւնը որ միշտ հաշուի առնէ Կեդրոնը։ Ուստի տրամաբանօրէն Կեդրոնը պէտք է ոյժ տայ ընկերվարականներուն, բայց ինք ալ պէտք է նկատողութեան առնէ կարծիքներու հոսանքը։ Արդ, այդ հոսանքը յայտնապէս հակառակ է ընկերվարականներուն եւ Կեդրոնի ընտրողները մեծ մասամբ կը բաղկանան պահպանողական տարրերէ, որոնք բոլորովին հակակիր են ընկերվարականներուն, եւ որոնք պիտի չուզեն յաջողցնել տալ ընկերվարականի մը ընտրութիւնը։ Ըսուեցաւ թէ անկարելի է սերտիւ համախմբել պահպանողականները եւ ազատականները, վասն զի փրականին մէջ այդ տեսակ բան մը անկարելի է. եթէ այդ համախմբումը նոյն իսկ տեղի կ'ունենայ ընտրական կարգ մը պատահականութեանց առաջքը առնելու համար, չի կրնար յարատեւ գոյութիւն մը ունենալ Ռայխսթագին մէջ։ Մինչեւ հիմա յայտնի չէ եղած թէ ի՛նչ կարգախօս տրուած է կաթոլիկ ընտրողներուն։ Կեդրոնի կուսակցապետներէն Պ. Էրցպէրկէր յայտարարեց թէ կղերականները բնաւ պիտի չքուէարկեն ազգայնական-ազատականներու համար եւ թէ ընդհանուր կերպով համեմատականի ընտրութեան մէջ, ուր ընկերվարականները եւ ազատականները դէմ առ դէմ կը գտնուին, Կեդրոնը մտադիր է ձեռնպահ մնալ։ Այդ ձեռնպահութիւնը, անշուշտ, նպաստաւոր պիտի ըլլայ ազատականներուն, որոնք, գրեթէ ամէն տեղ ընկերվարականներէն առաջ անցած են, սակայն խնդիր է գիտնալ թէ այդ կարգախօսը մինչեւ ո՛ր աստիճան պիտի յարգուի։ Այդ տեսակ պարագաներու մէջ ընտրական քիչ մը զօրաւոր զանգուածի մը համար դժուարին է ձեռնպահ մնալ եւ վճռին չմասնակցիլ. ուստի հաւանական է որ, կուսակցապետներուն կարգախօսին հակառակ, Կեդրոնի ընտրողները կա՛մ դէպի աջ եւ կամ դէպի ձախ յարին։ Ճիշդ այդ կէտին մէջ է համեմատականի ընտրութեանց արդիւնքին իրական անծանօթը, սակայն շատ հաւանական չերեւար որ քաղաքական հոսանքը սպասման այդ կարճ ժամանակամիջոցին մէջ փոխուի եւ մինչեւ երկուշաբթի բաւական փոփոխութիւն մը տեղի ունենայ՝ մեղմացնելու գերման ընտրութեանց առաջին նշանակութիւնը։ (Ենտէ. Պէլժ)

—Վիլհէլմ կայսրը սապէս պատասխանեց Ֆրանսայի Նախագահին այն հեռագրոյն որով ցաւակցութիւն կը յայտնէր հանքային աղէտին համար.

«Խիստ զգածուած այն ջերմագին համակրութեան համար զոր յայտնեցիք՝ մեր քաջարի հանքագործներէն բազմաթիւ զոհերու պատճառ եղող ահռելի աղէտին առթիւ, կը խնդրեմ, Պարոն Նախագահ, ընդունիլ իմ անկեղծ շնորհակալութիւններս եւ համոզուիլ թէ Սարրի հանքագործ ժողովուրդը, զոր խոր սուգի մէջ թողած է այդ աղէտը, եւ ամբողջ գերման ժողովուրդը պիտի գիտնան գնահատել ձեր համակրալի ցաւակցութիւնները։»

—Գերմանիոյ գաղթային վերատեսուչ Պ. Տէրնպուրկ, գաղթային եկամտացոյցը վաւերացնելէն անմիջապէս ետքը, մտադիր է ուղեւորութիւն մը կատարել գերման գաղթավայրերուն մէջ՝ նախ արեւելեան Ափրիկէէն սկսելով։

—Ռայխսթագին համար կ'ըսուի թէ ոչ թէ փետրուար 14ին, այլ 19ին պիտի գումարուի։

—Աւստրիոյ Ռոտոլֆ իշխանին մահուան տարեդարձին օրը Վիլհէլմ կայսրը այցելութիւն տուաւ Պերլինի աւստրիական դեսպանին, որուն հետ մէկ ժամու չափ տեսակցեցաւ։

—Վիլհէլմ կայսրը, Ռայխսթագի ընտրութեանց արդիւնքին առթիւ, Նախարարապետ ֆոն Պիւլով իշխանին ջանքերը ջերմ բառերով գնահատելով, յոյս յայտնեց որ համեմատականի մնացած քուէարկութեանց արդիւնքն ալ նպաստաւոր պիտի ըլլայ։

—Ֆրանց Եոզէֆ կայսրը, Վիլհէլմ կայսեր ծննդեան տարեդարձին առթիւ, ղրկած հեռագրով շնորհաւորած է նաեւ Ռայխսթագի ընտրութեանց արդիւնքը։ Նոյնպէս արտաքին գործոց նախարար Պարոն Էրէնթալ շնորհաւորած է Վիեննայի գերման դեսպան կոմս Վէտէլը՝ Ռայխսթագի ընտրութեանց գոհացուցիչ արդիւնքին համար։

—Գերման պաշտօնաթերթը կայսերական հրովարտակ մը կը հրատարակէ, որուն մէջ կայսրը իր ընտանեկան շրջանակին մէջ տեղի ունեցած ուրախառիթ դէպքերը եւ հարիւր տարի առաջ Գերմանիոյ անպատու օրերը յիշելէ ետքը, շնորհակալութիւն կը յայտնէ իր ծննդեան տարեդարձին առթիւ ընդունած շնորհաւորութեանց եւ տեղի ունեցած արտայայտութեանց, որոնք գերման ընտրողներուն բանած ընթացքին հետ մեծ ուրախութիւն պատճառած են իրեն։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Ժուռնալի Համի թղթակիցը զեկոյց մը կը ղրկէ նոյն թերթին, ըսելով որ Վատիկանէն քաղած է։ Այդ զեկոյցը կ'ըսէ թէ Պապը Ֆրանսայի եպիսկոպոսներուն յայտարարութեանը մէջ երկու փոփոխութիւններ միայն կատարած է։ Կը պահանջէ թէ թաղապետական Խորհուրդը ոչ միայն համաձայնի կղերին հետ, այլ թէ կառավարիչը բրոթոքոլ մը ստորագրէ եպիսկոպոսներուն հետ։ Այդ պարագան երաշխաւորութիւն մըն է նուիրապետութեան։ Պապը նաեւ կը պահանջէ որ բրոթոքոլը, որուն կաղապարը կ'ընդունի, ամենուն կողմէ ընդունելի փոփոխութիւն մը ըլլայ՝ բացարձակապէս յայտարարող թէ առանց միաձայնութեան բան մը պիտի չորոշուի։ Եթէ հաւանութիւնը միահաղոյն ու անմիջական չէ, Պապը պիտի հրամայէ քահանաներուն լքանել աղօթատեղիները, եւ միեւնոյն օրը կրօնքի հանրային պաշտամունքը պիտի դադրի Ֆրանսայի մէջ։ Զեկոյցը կը յարէ թէ ո՛չ եպիսկոպոսներու յայտարարութիւնը եւ ոչ ալ առաջարկուած պայմանագրութեան բրոթոքոլը նախապէս չեն ներկայացուած կառավարութեան։

—Օսէրվաթորէ Ռոմանօ, արտատպելով Ֆրանսայի եպիսկոպոսներուն յայտարարութիւնը, կը յայտարարէ թէ Վատիկան կը հաւանի անոր։

—Վատիկանի կարտինալ-փոխանորդին եւ բոլոր կղերականներուն կողմէ ստորագրուած ուղերձ մը ղրկուեցաւ Բարիզի արքեպիսկոպոս Ռիշար կարտինալին։

—Նիւ-Եորքէն կը հեռագրեն Օսէրվաթորէ Ռոմանօի թէ տեղւոյն կաթոլիկներէն հինգ հազար հոգի որոշեր են ուղերձ մը ղրկել Պապին՝ Ֆրանսայի մէջ կրօնական գործերուն համար։

ԱՆԳԼԻԱ

Սդանտարդ կ'ըսէ թէ Լորտ Քիչնէր եթէ նոր ժամանակամիջոցի մը համար վերահաստատուի Հնդկաստանի բանակին հրամանատարութեան պաշտօնին մէջ, Ֆրէնչ զօրավարը անգլիական բանակին ընդհանուր քննիչ պիտի կարգուի Քոննոթի դուքսին տեղ։

—Նէրոպիէն (բրիտանական արեւելեան Ափրիկէ) կը հեռագրեն թէ պղինձի շատ հարուստ հանք մը գտնուեր է Թարուի անապատին մէջ՝ Ուկանտայի երկաթուղիին մօտ։

—Ելմտական նախարարութեան կողմէ Խորհրդարանին մէջ ներկայացուցիչ Պ. Ռընչիմէն գանձուն ելմտական քարտուղար անուանուեցաւ Պ. Մաք Քինայի տեղ։ Հնդկաստանի նախարար անուանուեցաւ Պ. Հոպհաուզ։ Պ. Ռընչիմէնի յաջորդեց Պ. Մաքնամարա։

—Անգլիոյ արեւելեան մեծ երկաթուղիին բաժնետէրերու մէկ գումարումին մէջ Լորտ Քլօտ Համիլթըն ըսաւ թէ Մանշի տակէն թունել մը բանալու ծրագիրը յիմարութիւն է։ Այդ խօսքերը ծափահարուեցան։ Հարաւային արեւելեան երկաթուղիի բաժնետէրերու մէկ գումարումին մէջ ալ այդ ծրագիրը, ընդհակառակն, հաւանութեան արժանացաւ։

—Տովրի թաղապետական Խորհուրդը միաձայնութեամբ որոշեց դիմադրել Մանշի տակէն թունելի ծրագրին, որուն հեղինակները խստիւ քննադատուեցան։ Յայտարարուեցաւ թէ այդ թունելը վտանգ մը պիտի ըլլայ Անգլիոյ համար։

ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ

ՑՈՒՑԻՉ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ալեքսանտէր տեղակալը Անգլիա պիտի ժամնէ, կեդրոնական Ափրիկէի մէջ երկարատեւ խիստ յանդուգն ուղեւորութիւն մը կատարելէ ետքը։ Կրկնած է, եւ կ'երեւայ թէ մեծ յաջողութեամբ, ափրիկեան ցամաքին այն ուղեւորութիւնը զոր Տօքթ. Նաչթիկալ կատարած էր արեւմտեան եզերքէն մինչեւ Կարմիր ծով, անցնելով կեդրոնական Սուտանէն, Ափրիկէի այն մասը, որ մինչեւ հիմա նուազ ծանօթ է։ Ուղեւորութիւնը երկար, տաժանելի եւ աղէտալի եղած է։ Ալեքսանտէր տեղակալը Նիկէրի գետաբերանէն ճամբայ ելած էր 1904 մարտին՝ իր եղբօրը՝ Քլօտ Ալեքսանտէր հարիւրապետին, Կոսլինկ հարիւրապետին եւ Պ. Թալպոթի հետ։ Ներկայ յունուար 14ին Բահր-Սուտան ժամանեց առանձին։ Եղբայրը, քսանըվեց տարեկան, աղիքներու բորբոքումէ մեռած է Մանիֆօնիի մէջ Չատ լիճին հարաւային արեւմտեան կողմը՝ 1904 հոկտ.ին։ Պ. Թալպոթ հարկադրուած էր վերադառնալ։ Կոսլինկ հարիւրապետը մեռած է ճահճային տենդէ յունուար 13ին։ Երկրախոյզը եւ իր ընկերները իրենց անցած երկիրներուն մէջ աշխարհագրական խիստ շահեկան հետազօտութեանց ձեռնարկեցին. միանգամայն կենդանաբանական կարեւոր հաւաքածոյ մը ձեռք բերին, ինչպէս նաեւ եռանկիւնաչափական չափեր առին Իպիի շուրջը գտնուած երկիրներուն՝ Պէնէօ գետին վրայ։ Խնամով ճշդեցին Չատ լիճին շուրջը, որուն պայմանադրական ձեւը մեծապէս պիտի փոխուի յառաջիկայ քարտէսներուն մէջ։ Երկրին ջրագրութեանը մասին ալ ուսումնասիրութիւն կատարեցին՝ Շարիի եւ Ուպանկիի մէջտեղը եւ Քոնկոն Նիկէրի միացնող գետերը։ Ալեքսանտէր տեղակալը իր արշաւախումբին հետ, որուն թիւը պակսած էր յոգնութեանց եւ հիւանդութեանց հետեւանքով, անցաւ հասարակածային անտառները եւ Լատո ժամանեց, Նեղոսի վրայ, անցնելով դեկտեմբերին։ Ուղեւորութեան երկու երրորդ մասը կատարուեցաւ նուազ ծանօթ տեղերէ. շատ վայրեր եւ ոչ մէկ Եւրոպացի ոտք կոխած էր։ Այդ ուղեւորութիւնը թէեւ արկածալից էր, սակայն գիտական նշանաւոր արդիւնքներ ունեցաւ՝ պայքար անօթութեան եւ հիւանդութեանց դէմ, Չատ լիճին մօտ ճահճային վայրերէ անցք եւ նոր ցեղերու գիւտ։ Այդ ցեղերէն մէկուն մէջ կիները պոչի ձեւով զարդեր կը կրեն։ Ալեքսանտէր տեղակալը Անգլիոյ արքայական աշխարհագրական Ընկերութեան առջեւ հրապարակախօսութիւն մը պիտի կատարէ իր այդ շահեկան ուղեւորութեանը վրայ։

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՔԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԶԴ.— 1890ի 4% ՕՍՄԱՆԵԱՆ փոխառութեան պարտաթուղթերէն ունեցողներուն կը ծանուցուի թէ յիշեալ պարտաթուղթերուն 34րդ վիճակահանութիւնը 1907 փետր. 1ին պիտի կատարուի հոն, Պարտքի վարչութեան կեդրոնատեղիին մէջ, Պոլիս Ճկալ Օղլու փողոց։

Կ. Պոլիս 19 փետր. 1907 6—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ԿԱՅՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԻՋԵՒ

Ինչպէս ծանուցուեցաւ, Կայս. Կառավարութեան եւ Պուլկարիոյ իշխանապետութեան միջեւ առեւտրական համաձայնութիւն մը կնքուած եւ յունուար 1էն ի վեր սկսած է գործադրուիլ։ Ահաւասիկ ընդհանուր տրամադրութիւնները այդ համաձայնութեան.

Օսմ. այն արտադրութիւնները եւ բերքերը, որոնք նշանակուած են համաձայնութեան կցուած 1 ու 2 թիւ ցուցակներուն մէջ, առանց մաքսի պիտի մտնեն Պուլկարիա եւ Արեւելեան Ռումէլի։ Նոյնը պիտի ըլլայ նաեւ թիւ 3 ու 4 ցուցակներուն մէջ նշանակուած պուլկարական բերքերուն եւ արտադրութեանց համար երբ Կ. Պոլիս եւ Կայս. Նահանգները մտցուին։ Թիւ 5, 6, 7, 8, 9 ու 10 ցուցակներուն մէջ նշանակուած օսմ. եւ պուլկարական բերքերը ու արտադրութիւնները երբ արտածող երկիրը ներածուին, վերոգրեալ ցուցակներուն տրամադրած մաքսին, «աքսիզ»ին եւ «օքթռուա»ին ենթակայ պիտի ըլլան։ Անոնք նաեւ պիտի օգտուին ուրիշ երկիրներու արտադրութեանց համար եղած ու ըլլալիք մաքսի զեղչերէն։ Վերոգրեալ ցուցակներուն մէջ չնշանակուած ապրանքները երբ երկու կողմի երկիրները մտնեն, ամէնէն աւելի նպաստաւորեալ օտար ազգի մը համար սահմանուած մաքսին ենթակայ պիտի ըլլան, սակայն երկու կողմերը իրաւունք ունին վերոգրեալ ցուցակներուն մէջ յաւելումներ ընել ու չնշանակուած հողային բերքերու եւ առեւտրական արտադրութեանց վաճառականութեան դիւրութիւն ընծայելու նպատակով։ Աղ, ծխախոտ, ալքոլ, գարեջուր եւ ամէն տեսակ ոգելից ըմպելիներ ներկայ դրութեան եւ կամ, ուրկէ որ ալ արտածուած ըլլայ, համանման ապրանքներու յատուկ դրութեանց պիտի ենթարկուին։ Երկու կողմի երկիրներէն մէկէն միւսը փոխադրուած եւ կամ ապրանքը տարուելէ ետքը վերադարձուած եւ ապրանքներու փոխադրութեան յատուկ պարկեր, մեծ ու փոքր տակառներ, շիշեր եւ ամէն տեսակ ամաններ, ծածկոցներ եւայլն մաքսէ զերծ ըլլալով պիտի ընդունուին։ Օսմ. արտադրութեանց ու բերքերու վերաբերեալ ապրանքներ Պուլկարիոյ մէջ «թրանսիթ»ի տուրքէն զերծ են, որով պուլկարական ապրանքներն ալ նոյն թոյլտուութիւնը պիտի վայելեն օսմ. երկիրներուն մէջ։ Երկու կողմի արտադրութիւններն ու բերքերը երբ ցամաքի կամ ծովի ճամբով մէկ նաւահանգիստէն միւսը փոխադրուին, ամէնէն նպաստաւորեալ երկրին տրամադրութեանց պիտի ենթարկուին, եւ ոչ բնաւ աւելի։ Ամէն տեսակ ապրանքներու, ինչպէս նաեւ անասնոց, անոնց արտադրութեանց փոխադրութեան, «թրանսիթ»ին, վերադարձնելու, մթերանոց դրուելուն, քիմիական տարրալուծմանց եւ ցամաքի ու ծովի ճամբով կատարուելիք մաքսային ամէն տեսակ գործառնութեանց համար փոխադարձաբար պիտի ենթարկուին ամէնէն նպաստաւորեալ երկրին տրամադրութեանց։

Երկու կողմը իրենց սահմանագլուխին վրայ պիտի արգիլեն մաքսանենգութեան մթերանոցներու հաստատումը. նաեւ հաւաքաբար պիտի արգիլեն մաքսանենգութեան միջոցաւ ապրանքներու մուտքը, եւ հեղինակները պիտի պատժեն։ Այդ առթիւ երկու կողմի պաշտօնեաները իրարու պիտի օգնեն. միանգամայն ամէն տեղեկութիւն պիտի հաղորդեն պատկանեալ պաշտօնեաներուն։ Վաճառականներու, գործարանի տէրերու, արհեստաւորներու եւ կամ անոնց ներկայացուցիչներուն կողմէ իբրեւ նմոյշ ներածուած եւ մաքսի ենթակայ առարկաները առանց մաքսի պիտի ընդունուին, սակայն արտածողները արտածող երկրին մէջ սահմանուած օրինական երաշխաւորութիւնը պէտք է ընծայեն։ Այդ առարկաները եթէ չծախուին, պէտք է մինչեւ վեց ամիս վերադարձուին. նաեւ առանց տարակոյսի պէտք է հաստատուի որ նախապէս ներածուած առարկաներն են։

Պուլկարիոյ իշխանապետութիւնը «աքսիզ»ի տուրքը պիտի չգանձէ օսմ. ներածութիւններէն՝ թարմ ու չոր պտուղներէ, մեղրամոմէ, «թահան»է, խողկաղինէ, սուսամէ, ատաղձէ, կողովի ու տակառի մէջ դրուած ձիթապտուղէ, կաշիէ, պարզ օճառէ, գլխու կապուելիք «եազմա»ներէ, թարմ, չոր ու աղած ձուկերէ, թարմ ու չոր ամէն տեսակ բանջարեղէններէ եւ կանեփէ, բամպակէ, բուրդէ ու մետաքսէ չհիւսուած կերպասներէ։ Պուլկարիոյ եւ Արեւելեան Ռումէլիի մէջ 9 թիւ ցուցակին տրամադրած մաքսերուն պիտի ենթարկուին օսմ. հետեւեալ ապրանքները. — Անուշեղէն, շաքարեղէն, շաքարեղէնով պատրաստուած պտուղներ, ամէն տեսակ «լոքում»ներ, «բէքմէզ հէլվասը», «դող հէլվասը», «նուկա» եւ ամէն տեսակ «հէլվա»ներ։ Իսկ բուսական ամէն տեսակ իւղեր եւ չամիչներ 10 թիւ ցուցակին տրամադրած մաքսին ենթակայ պիտի ըլլան։ Պուլկարիոյ արտադրութիւններէն թարմ ձուկերը Կ. Պոլսոյ ու Կայս. Նահանգներուն մէջ «միրի» տուրքին ենթակայ պիտի ըլլան։ Օսմ. արտադրութիւններէն թարմ ձուկերն ալ համանման տուրքի մը ենթակայ պիտի ըլլան Պուլկարիոյ եւ Արեւելեան Ռումէլիի մէջ։ Օսմ. արտադրութիւնները եւ բերքերը, բաց ի տեղական տուրքերէն, «օքթռուա»ի եւ ուրիշ այդ կարգի տուրքերու ենթակայ պիտի չըլլան Պուլկարիոյ եւ Արեւելեան Ռումէլիի մէջ. փոխադարձաբար նոյնը պիտի ըլլայ նաեւ Պուլկարիոյ եւ Արեւելեան Ռումէլիի ապրանքներուն համար օսմ. երկիրներու մէջ։ Երկու կողմը կը խոստանան ապրանքներու համար նոր տուրք չհաստատել եւ եղածն ալ չաւելցնել. նաեւ յառաջիկային ներքին տուրքերը ջնջել կամ զեղչել եթէ հարկ ըլլայ, ատկէ երկու կողմն ալ փոխադարձաբար պիտի օգտուին։ Երկու կողմը կը խոստանան փոխադարձ վաճառականութեան արգելք չըլլալ՝ ներածման կամ «թրանսիթ»ի մասին։ Այդ մասին բացառութիւն կը կազմեն Ա. Տէրութեան վերաբերեալ եւ հիմա գործադրուող կամ ապագային հաստատուելիք մենավաճառները, Բ. ռազմական իրեղէնները, հանրային ապահովութիւնը, Գ. հանրային առողջապահութիւնը, տարափոխիկ հիւանդութիւնները եւ վնասակար միջատներու դէմ օգտակար տունկերու պաշտպանութիւնը եւ Դ. անասնոց առողջապահութեան ու հսկողութեան վերաբերեալ խնդիրները։ Երկաթուղիի միջոցաւ կատարուելիք փոխադրութեանց յատուկ մաքսային գործողութեանց առանց վնասելու, սա կէտը որոշուած է որ երկու կողմի երկիրներէն մէկին մէջ երաշխաւորագիր ցոյց տալու ենթակայ եւ այդ կամ ուրիշ պատճառով հոն արդէն կնքոյ տակ առնուած ապրանքները միւս կողմի երկրին մէջ բնաւ պիտի չբացուին. բնաւ չբացուած ու անեղծ մնացած կնիքը կամ կապարները եթէ «քօնթրոլ»ի գործողութեանց ենթարկուած են, պիտի չփոխուին։ Երկու երկիրներուն մէջ մաքսային գործառնութիւնները կարելի եղածին չափ պիտի պարզուին եւ դիւրութեամբ ու փութով պիտի կատարուին։

Օսմ. ու պուլկարական ապրանքները համաձայնութեան սկիզբները նշանակուած մաքսային թոյլտուութիւններէն օգտուելու համար, պէտք է ուղղակի փոխադրուին ցամաքի ճամբով ու երկաթուղիով եւ կամ ծովի ճամբով։ Օտար երկրէ մը անցած ապրանքները բացառութիւն կը կազմեն. այդ պարագային նոյն ապրանքները պիտի օգտուին վերոգրեալ թոյլտուութիւններէն. միայն թէ պէտք չէ որ նոյն երկրին մթերանոցներուն մէջ դրուած, «թրանսիթ»ի պահուն ցամաք հանուած, մէկ տեղէն միւսը փոխադրուած եւ կամ ուրիշ գործողութեան մը ենթարկուած ըլլան։ Արտածման վայրի վկայականներ անհրաժեշտ են, որպէս զի ապրանքները կարենան օգտուիլ սահմանուած զեղչերէն կամ թոյլտուութիւններէն։

Օսմ. երկիրներու արտադրութիւններէն 6 եւ 9 թիւ ցուցակներուն մէջ նշանակուած ապրանքները եւ ձէթ, պարզ ապակեղէններ, սեւ շիշեր, լամպայի շիշեր, կեղծ ադամանդներ, արժէքաւոր մետաղներէ չշինուած զարդի առարկաներ, պղնձէ ու արոյրէ առարկաներ, մետաքսէ կամ խառն մետաքսէ կապերտներ, մետաքսէ կամ խառն բանուած կամ ոչ սեղանի եւ անկողինի ծածկոցներ, շալեր, գրպանի թաշկինակներ, գլխու «եէմէնի»ներ, խաչոր փողկապներ, մետաքսէ կամ խառն, բանուած ու չբանուած, ծոպով կամ ոչ, մետաղէ թելերով հիւսուած կամ ոչ գօտիներ, մետաքսէ կամ խառն «բասմանթըրի»ներ, Անատոլըի կապերտներ ու գորգեր, ֆէսէր, կանեփ, «քոք» ածուխ, եղեւիններ, հանքագործի արտադրութիւններ, խողանակներ, ոսկորէ սանտրեր, սուրճի դաւաթներ, խաւաքարտէ տուփեր, բամպակէ գերձաններ, բամպակէ ժապաւէններ ու շղթաններ, ծոպեր, վարագոյրի կապեր, մեքենայով շինուած բամպակէ գուլպաներ, կարճ գուլպաներ, թիթեղէ շինուած առարկաներ, «եազմա»ներ, գունաւոր ու պարզ ուլունքէ զարդի առարկաներ եւ ապրանքներ, ինչպէս նաեւ 7 ու 8 թիւ ցուցակներուն մէջ նշանակուած պուլկարական ապրանքներ եւ փոշի կամ զանգուած ու զտուած շաքարներ, ամէն տեսակ շաքարեղէններ, հոտեղէններ, «քօզմէթիք»ներ, անուշահոտ օճառներ, լուացքի օճառներ, մելան, երկաթէ վառարաններ, յախճապակիով պատած առարկաներ, ամէն տեսակ կապերտներ, օղակներ, պարաններ, չուաններ, երկաթէ ու պողպատէ դրամարկղեր, երկրագործական գործիքներ, կանեփէ հիւսուածներ, խողովակներ եւ ամաններ։ Անոնց ամէնքն ալ օսմ. եւ պուլկարական մաքսատանց պաշտօնեաներուն կողմէ իբրեւ արտադրող վայրի վկայական պիտի նշանակուին ապրանքին տիրոջ եւ գործարանին կամ աշխատանոցին վարիչին կամ Տնօրէնին կողմէ տրուած «ֆաթուրա»ին վրայ։ Վերոգրեալ ցանկին մէջ չգտնուած ապրանքներուն, որոնք 2, 4 եւ 10 թիւ ցուցակներուն մէջ նշանակուած են, արտածման վայրի վկայականները պիտի նշանակուին ապրանքը արտածող անձին «ֆաթուրա»ներուն վրայ։ Անոնց ստորագրութիւնները կամ կնիքները ձրիաբար պիտի վաւերացուին երկու երկրաց մէջ անոնց վաճառատեղիները գտնուած տեղւոյն առեւտրական դատարանին ու ատենակին եւ թաղապետական պաշտօնեաներուն կողմէ։ Նաւահանգիստներու եւ ծովեզերքներուն մէջ այդ վաւերացման գործողութիւնը մաքսային պաշտօնեաները պիտի կատարեն ձրիաբար։ «Ֆաթուրա»ներուն մէջ պէտք է բացորոշապէս նշանակուին ապրանքները պարունակող ամաններուն թիւերը ու «մարքա»ները, ապրանքներուն տեսակը, քանակը, վաճառականներուն անունը ու մականունը, երթալիք տեղը, հասցէն եւայլն։ Երկու կողմի մաքսատանց պաշտօնեաները «ֆաթուրա»ներու իսկական օրինակին վրայ միայն գործողութիւն պիտի կատարեն. անոնց երկրորդ օրինակները ընդունելի չեն։ Եթէ «ֆաթուրա»ներուն եւ կամ արտածման վայրի վկայականներուն մէջ արտածման վայրը սխալ ցոյց տալու աստիճան անկանոնութիւն մը գործուի եւ կամ ճշմարտութեան հակառակ կէտեր գտնուին, այդ պարագային ամէնէն նպաստաւորեալ երկրին տրամադրութիւնները պիտի գործադրուին։ Մաքսային պաշտօնեաները քննութեամբ պէտք է համոզում գոյացնեն թէ «ֆաթուրա»ները եւ արտածման վայրի վկայականները բոլորովին համապատասխան են ներածման պահուն յայտարարուած ապրանքներուն։ Եթէ քննութեան պահուն հաստատուի թէ օսմ. եւ պուլկարեան ապրանքներուն հետ համանման օտար ապրանքներ ալ կան եւ կամ թէ «ֆաթուրա»ները եւ արտածման վայրի վկայականները կեղծ են, այդ պարագային ապրանքին եւ այդ արարքին հեղինակներուն նկատմամբ պիտի գործադրուին արտածման երկրին մաքսային կանոնագրութեան տրամադրած պատիժները։ Եթէ հաստատուի թէ վաճառատուն մը այդ կարգի խարդախութիւն մը գործած է, արտածող երկիրը ներածող երկրին տեղեկութիւն պիտի հաղորդէ, նոյն արարքին հեղինակին նկատմամբ դատական հետապնդում կատարելու համար։ Երկու երկիրներէն տրուած արտածող վայրի վկայագիրները դրոշմի ու արձանագրութեան տուրքերէ եւ ամէն տեսակ ծախքերէ զերծ պիտի ըլլան։

Երկու երկիրներէն մէկին մէջ հաստատուած եւ ըստ օրինի հիմնուած բաժանորդագրական անանուն ընկերութիւնները եւ առեւտրական, ճարտարարուեստի, սեղանաւորական ու ապահովագրական ընկերութիւնները պիտի կրնան տեղական դատարաններուն մէջ դատ բանալ եւ կամ բացուած դատի մը դէմ իրաւունքնին պաշտպանել։ Այդ ընկերութիւնները եթէ միւս կողմի երկրին մէջ ճիւղ կամ գործակալութիւն հաստատել ուզեն, պիտի հարկադրուին տեղական օրէնքներուն համաձայն գործել։ Օսմ. Պանքան եւ Պուլկարիոյ Պանքան պիտի կրնան հիմակուընէ Կ. Պոլսոյ ու Սոֆիայի մէջ մէյմէկ մասնաճիւղեր հաստատել, տեղական օրէնքներուն համակերպելով։ Երկու կողմի առեւտրական ատենակները պիտի կրնան փոխադարձաբար վաճառականութեան ու ճարտարարուեստի միւզէներ հաստատել, առեւտուրին զարգացմանը համար։ Երկու պայմանադիր կողմերու ժողովուրդը, մինչեւ որ մասնաւոր համաձայնութիւն մը կնքուի, գործարանի եւ առեւտրական «մարքա»ներու վերաբերեալ խնդրոց մէջ տեղական ժողովուրդին նման միեւնոյն պաշտպանութիւնը պիտի վայելեն, սակայն տեղական օրէնքներուն պիտի համակերպին։ Ոսկիէ, արծաթէ, բլաթինէ եւայլն շինուած ոսկերչական առարկաները եւ գոհարեղէնները երկու երկիրներուն մէջ ալ հաստատուած «քոնթրոլ»ին միայն պիտի ենթարկուին։ Թիւ 12, 13 եւ 14 ցուցակներուն պարունակած տրամադրութիւնները սահմանուած են, համոզուած ըլլալով որ ներկայ համաձայնութեան կնքումը պիտի դիւրացնէ սահմանագլուխին վրայ կատարուած վաճառականութեան, շրջակայ հողերուն եւ նաւագնացութեան վերաբերեալ խնդրոց կարգադրութիւնը։ Ներկայ համաձայնութիւնը 1907 յունուար 1ին պիտի սկսի գործադրուիլ. մինչեւ որ երկու պայմանադիրներուն կողմէ անոր ջնջումը ծանուցուի, ընդունելի պիտի ըլլայ։ Ըստ օրինի ջնջուիլը ծանուցուած օրէն մէկ տարի ետքը պիտի դադրի։ Այս համաձայնութեան կիրառումէն փորձով եւ կամ երկու կողմի տնտեսական օգտին համար յարմար դատուի, փոփոխութիւններ պիտի ըլլան եւ կամ նոր տրամադրութիւններ պիտի աւելցուին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆ.—Քաղաքապետութեան Խորհուրդին անդամ անուանուեցաւ նոյն պաշտօնարանին վճռագիրներու գործադրութեան պաշտօնեայ Համտի պէյ, որուն Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ։

—Էտիրնէի Նահանգին Ճիսրը Մուսթաֆա Փաշա գաւառակին գայմագամ անուանուեցաւ Ախի Չէլէպիի գայմագամ Ահմէտ Հասան պէյ, որուն յաջորդեց Արշիպելագոսի կղզիներու Նահանգին Բիլամար գաւառակին գայմագամ Ապտուլլահ պէյ. անոր ալ յաջորդեց Թէֆնիի նախորդ գայմագամ Մուսթաֆա Հիլմի պէյ։

—Ղալաթիոյ դատաւոր անուանուեցաւ Պըրչէհրլի Սիւլէյման Շիւքրի էֆ.։

ԱՍՏԻՃԱՆ.—Միթէմայիզ աստիճան տրուեցաւ Եէնիշէհրի գաւառակին գայմագամ Թէվֆիք պէյի։ Սանիէի աստիճան՝ Պաղտատի Նահանգին Տէֆթէրխաճէնի Տնօրէն Օսման Պէհճէթ էֆ.ի։

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ.— Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Վեհ. Սուլթանին բժիշկներէն Ֆէրիտ Նուրէտտին փաշայի։ Երկրորդ կարգի Օսմանիէ՝ քաղաքապետութեան Խորհուրդին անդամ Համտի պէյի։ Չորրորդ կարգի Օսմանիէ՝ Անատոլը Գավաքի քարանթինայի բժիշկ Վուրոս էֆ.ի։ Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ Կայս. անձնական Գանձուն ապսէի մատակարարող Ահմէտ պէյի։

—Առաջին կարգի Շէֆգաթ՝ Կայս. աւագ թիկնապահ եւ ընդհանուր սպայակոյտին նախագահ մուշիր Իզմէր Բիւշիր փաշայի աղջկան՝ Խայրիէ հանըմի եւ երկրորդ կարգի՝ հարսին՝ Խայրէնիսա հանըմի։ Առաջին կարգի Շէֆգաթ՝ տղոց յատուկ Համիտիէ հիւանդանոցին ուսուցիչ հազարապետ Տօքթ. Պիր պէյի տիկնոջ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.—Վեհ. Սուլթանը, հեռագիր մը ուղղելով Վիլհէլմ կայսեր, ցաւակցութիւն յայտնեց Ռէտէնի հանքային աղէտին առթիւ։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ.—Պարսիկ կառավարութիւնը Առիւծ եւ Արեւ պատուանշանին առաջին կարգը տուաւ Վանայ Նահանգին կուսակալ Ալի պէյի։ Սերպիոյ կառավարութիւնը Ս. Սավա պատուանշանին առաջին կարգը տուաւ Իզմիրի Յունաց մետրապոլիտ Տ. Ֆիլօթէոսի եւ երկրորդ կարգը՝ Եանեայի, Լէմնոսի, Սիլիվրիի, Սէճանիէի եւ Շապին Գարահիսարի մետրապոլիտներուն՝ Տ. Տ. Նէքտարիոսի, Նէնատիոսի, Տիոնիսիոսի, Աէբաֆիմի ու Բոլիքարբոսի, Յունաց Պատրիարքական փոխանորդ Տ. Գալինիքոսի. նաեւ երրորդ կարգը՝ մետրապոլիտներու ժողովին առաջին քարտուղար Տ. Աթանասիոսի ու Պատրիարքարանի գործակատարի օգնական Սերրաքի էֆ.ի։ Կայս. Իրատէ մը արտօնեց այդ պատուանշաններուն ընդունելութիւնը եւ գործածութիւնը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ու հանրօգուտ շինութեանց նախարարութեան հաշուակալութեան դիւանին Տնօրէն կարգուեցաւ օգնականը՝ Հասան պէյ։

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ.— Ելմտական Նախարարութիւնը քսանըվեց յօդուածէ ծրագիր մը պատրաստած էր Կ. Պոլսոյ ու շրջականներու շէնքերու եւ հողերու արժէքները գնահատելու եւ փոխելու գործողութեանց մասին։ Բ. Դուռը, որուն մատուցուած էր այդ ծրագիրը, հարկ գտաւ փոփոխել անոր Ը. ու Թ. յօդուածները, որով ըստ այնմ հարկ եղածը գրուեցաւ Ելմտական Նախարարութեան։

ՕՍՄ. ՆԱՒԱՏՈՐՄԻՂ.—Ծովային պաշտօնարանին մէջ պատրաստուեցան յատակագիծները այն երկու առաջին կարգի զրահաւորներուն, որոնք պիտի շինուին նաւային գիտութեան նոր պայմաններուն համաձայն. իւրաքանչիւրը տասնեօթ հազար թոնօ տարողութիւն պիտի ունենայ. նաեւ 305 միլիմէթր տրամագիծով երկուքական թնդանօթ եւ քսան սանթիմէթրնոց ալ վեցական. միանգամայն նոր ձեւ ուրիշ տեսակ թնդանօթներ եւ թորփիլի խողովակներ։ Այդ զրահաւորները զոյգ պտուտակ պիտի ունենան։

—Նաւային բարձրագոյն վարժարանին շրջանաւարտներուն իբրեւ մարզարան ծառայելու համար նոր ձեւ նաւ մը պիտի շինուի՝ շոգեշարժ ու առագաստաւոր. անոր յատակագիծերն ալ պատրաստուած են։

ՊՐՈՒՍԱՅԻ երկրագործական վարժարանի գետնին վրայ հինգ հարիւր արտավար տեղ պիտի աւելցուի՝ ուսանողներու գործնական փորձին համար։

ՍԷԼԱՆԻԿԻ ծովածոցին մէջ կատարուելիք շոգենաւային երթեւեկութեան համար հինգ նաւամատոյցներ պիտի շինուին, որոնց պէտք եղած ատաղձները Կ. Պոլսէն գնուելով Սէլանիկ ղրկուեցան Շիրքէթի Խայրիէի Համիտիէի կողմէ։ Նաւամատոյցներուն վրայ գեղատեսիլ կայաններ պիտի կառուցուին։ Երթեւեկութիւնները մարտին պիտի սկսին, բայց նկատելով որ Անգլիա յանձնարարուած շոգենաւերը մինչեւ այն ատեն պիտի չկրնան ժամանել, որոշուած է առայժմ Շիրքէթի 47 ու 48 թիւ շոգենաւերուն նման երկու շոգենաւ ղրկել Սէլանիկ։ Բէշիկթաշ շոգենաւը ներկուած ու պատրաստուած ըլլալով, Սէլանիկ պիտի երթայ եւ հինգշաբթի օրը երթեւեկութեան պիտի ձեռնարկէ։ Այդ երթեւեկութիւնները մօտերս աւելի պիտի ընդարձակուին։

ԿՐԹԱԿԱՆ Նախարարութիւնը նկատելով որ առեւտրական Համիտիէ վարժարանին ուսանողներու թիւը հինգ հարիւրը անցած է եւ հիմակուան շէնքը անբաւական կուգայ, որոշեց նոյն վարժարանը փոխադրել Ոստիկանութեան Դիրանի շրջակայքը նախապէս գնուած վախճանեալ Րէմզի էֆ.ի ապարանքը։ Շէնքին ներքին կազմակերպութեանցը համար հինգ հարիւր ոսկի պիտի ծախսուի։

ԳԵՐՄԱՆԻՈՅ դեսպանը երէկ տեսակցեցաւ արտաքին գործոց նախարար Թէվֆիք փաշայի հետ։

ՓԱՅՏ ԵՒ ԱԾՈՒԽ.— Ներկայ տարուան մարտէն մինչեւ նոյեմբերի վերջը Կ. Պոլիս ժամանած ածուխին քանակութիւնն է 69, 13,871 օխա եւ փայտինն ալ 542,987 չէքի։ Այս տարի միւս տարիներուն հետ բաղդատմամբ աւելի են։

ԱԹԷՆՔԻ արքայական պալատին մէջ ճաշ մը տրուեր է ի պատիւ օսմ. դեսպան Րիֆաթ պէյի եւ դեսպանատան պաշտօնեաներուն։ Եօրկիոս թագաւորը ու ամբողջ արքայական գերդաստանը ներկայ գտնուեր են։

ՄԱԽՍՈՒՍԷԻ կողմէ Տրապիզոնի գիծին յատկացուած շոգենաւերը ասկէ վերջը Այանճըքի նաւահանգիստն ալ պիտի հանդիպին։

ԾՈՎԱՅԻՆ նախարարութեան դատական ճիւղին նախագահ Ֆէրիտ Խայրի փաշա, որ հիւանդ էր, երէկ մեռաւ։

ՄԻՏԻԼԼԻԻ մէջ, վերջերս, անզաւակ մեռած Չաֆիրիոս Պոլինաղու հինգ հազար ոսկի թողած է՝ կղզիին բարենպատակ հաստատութեանց։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻՆ 1906 տարուան գործառնութեանց արդիւնքը հիմակուընէ կարելի է ըսել թէ խիստ գոհացուցիչ է եւ նոյն հաստատութեան հիմնուելէն ի վեր ամէնէն փայլուն տարեշրջանը կրնայ նկատուիլ. հետեւաբար այս տարուան շահաբաժինը անցեալ տարուընէ աւելի պիտի ըլլայ։ 1905 դեկտ. 31էն 1906 օգոստոս 31, առեւտրական թուղթերու քանակութիւնը եղած է 1,310,000 անգլիական ոսկի՝ այսինքն հարիւրին վաթսուն համեմատութեամբ աւելցած է։ Ասոնցի փոխարէն փոխառութեանց գումարն է 1,630,000՝ այսինքն հարիւրին 41 աւելի. վերջապէս գործառնութեանց բոլոր ճիւղերն ալ աւելցած են։ 1906ին 22 ֆր. 50 սանթիմ շահաբաժին պիտի տրուի, մինչդեռ միւս տարիներուն այդքան չէր տրուած։ Բոլոր այս պարագաները ցոյց կուտան թէ Օսմ. Պանքային բաժնեթուղթերը ամէնէն հաստատունն ու շահաւորներն են։

ՌԷԺԻԻ անցեալ դեկտեմբեր ամսուան հասոյթը եղաւ 18,900,000 ղրուշ. նախորդ տարին եղած էր 18,800,000 ղրուշ։

ԱՐԺԷԹՈՒՂԹԵՐԸ.—Զէնինաս պաշտօնարանը որոշեց որ շատ գործածութենէ հինցած արժէթուղթերը եթէ անոնց վաւերականութիւնը տարակոյսի առարկայ ընելու վիճակին չեն ենթարկուած, հարկ պիտի չմնայ անոնց նորոգմանը կամ վաւերացմանը. իսկ եթէ վաւերական ըլլալնին չհաստատուելու աստիճանին հասած են, այդ պարագային ոչնչացած պիտի նկատուին։

ՊՐՈՒՍԱՅԻ մէջ ապահովագրական ընկերութիւնները սէնտիքա մը կազմած էին: Պրուսայի գաւառական Թերթը կ'ըսէ Թէ Օսմ. Ապահովագրական Ընկերութիւնը այդ սէնութքային բաժնուեր և ապահովագրական գիներն ալ ղեղչեր է:

ԳՐՃԱԼ ԹՕՓՐԱՔԻ մէջ պարտիզպան Մուսթաֆայի տանը մէջ առջի գիշերը ցաւալի արկած մը պատահեցաւ: Կինը՝ Լէման զաւակներուն հետ պառկած պահուն, քարիւղի լամպարը շրջելով հագուստները բռնկեցան: Կինը, իր զաւակները չխեղդելու համար, փողոց փութաց: Հոն դրացիները օգնութեան հասնելով մարեցին կրակը և խոյոն բժշկական դարմաններ եղան, սակայն երկու ժամ ետքը մեռաւ: Մուսթաֆա բացակայ էր:

ՍԿԻՒՏԱՐԻ մէջ դերձակ Մուսթաֆայի կինը իր երկու ամսուան զաւակը գինեցուած պահուն քունը տարաւ: Տղեկը ծիծը բերանը մնացած ըլլալով, հեղձամահ եղաւ:

ԳԱՆՏԻԼԼԻԻ մէջ Րէճէպ անուն մարդ մը լեռնէն փայտ փոխադրած ատեն տասը մեթր խորութեամբ փոս մը իյնալով գլխէն վիրաւորուեցաւ ու մեռաւ:

ՇԷՆՔԵՐՈՒ ՓԼՈՒԶՈՒՄ.— Էյուպի մէջ նաւային սպայ տեղակալ Իսմայիլ էֆ.ի տունը փլաւ, վասն զի պատերը խախխուած էին ձիւնէն հալելէն: Մէջը բնակող վեց հոգի հազիւ կրցան ազատիլ:

—Սկիւտարի Պիւլպիւլ Տէրէսիի կողմը, առջի օրը, երկու խանութներ փլան, առանց վնասակար հետեւանք մը ունենալու:

ԱՆԱՏՕԼՈՒ երկաթուղիին երրորդ շաբաթուան հասոյթը իւրաքանչիւր քիլօմեթրի համար սապէս եղած է.— Հայտար Փաշա-Էնկիւրիի գիծ (578 քիլօմեթր) 9,975 ֆր., անցեալ տարիէն 6,972 աւելի և միւս շաբաթներէն ալ 7,516: Էսկիշէհր-Գոնեայի գիծ (445 քիլօմեթր) 3,621, նախորդ տարիէն 3,503 աւելի և միւս շաբաթներէն ալ 4,018:

ՊԱԼՔԱՆ Ապահովագրական Ընկերութեան գրասենեակները յառաջիկայ փետր. 1/14ին պիտի փոխադրուին Ղալաթիա, Տէօյչէ Օրիէնթ Պանքի կից Սինասոն խանը: 10—4

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Բերայի Թաղ. Խորհուրդին կարգադրութեամբ, երէկ առաւօտ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պատարագ մատոյց քարոզիչ Տ. Համբակ եպիսկ. Դիմաքսեան, ողբացեալ Տիկին Աղաւնի Մ. Տ. Ներսէսեանի և Օրմանեան ու Տէր-Ներսէսեան գերդաստաններու բոլոր ննջեցեալներու յիշատակին: Ներկայ էր Ս. Պատրիարք Հայրը, շրջապատուած բազմաթիւ եկեղեցականներէ՝ Տ. Տ. Բաբգէն, Զաւէն, Մատթէոս Գալըճեան, Տիրայր, Եղիկ, Վահրիճ, Կորիւն, Գրիգորիս, Ղեւոնդ Դուրեան, Մարկոս վարդապետները, Տ. Մկրեան Հայրը, Տ. Յովհաննէս քհնյ. Շահպազեան և Տ. Վարդան քհնյ. Գատըգիւղի: Եկեղեցին լեցուած էր երկսեռ հաւատացեալներու ստուար բազմութեամբ, ո՛չ միայն Բերայէն, այլեւ զանազան Թաղերէ: Ներկաներուն մէջ կը նշմարուէին բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ, Վարչական Ժողովոյ և Տեսուչ Խորհրդոյ անդամներ, Պատրիարքարանի գլխաւոր պաշտօնէութիւնը, մամուլի ներկայացուցիչներ ևն.:

Տ. Համբակ Սրբազան խօսեցաւ գեղեցիկ քարոզ մը որուն ամփոփումը պիտի հրատարակենք վաղուան Թիւով:

Յաւարտ Պատարագին, հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւն կատարուեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ ամբողջ եկեղեցական դասուն:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, Ս. Պատրիարքը մեծարուեցաւ Թաղ. Խորհրդարանին մէջ և վերադարձաւ իր բնակարանը ուր միջօրէի սեղան մը տուաւ Արմաշական վարդապետներուն որոնք ներկայ էին եկեղեցական արարողութեան:

⁂ Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ եւս երէկ առաւօտ հոգեհանգստեան պատարագ և պաշտօն մատուցուեցաւ ի յիշատակ Կարապետ էֆ. Խաչատուրեանի վաղամեռ որդւոյն՝ Սուրէնի՝ որուն մահուան քառասունքն էր: Հանգուցեալին վշտահար հայրը և ընտանեկան բոլոր պարագաները ներկայ էին: Արարողութեանց նախագահեց Տ. Վահրամ արքեպս. Մանկունի:

ԾԱՅՐԱԳՈՒՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Ս. Պատրիարքը, յառաջիկայ շաբաթ երեկոյեան, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ ծայրագունութեան աստիճան պիտի տայ՝ կրօն. Ժողովոյ դիւանադպիր Տ. Տիրայր վրդ. Մարգարեանի և Վանայ առաջն. նորընտիր տեղապահ Տ. Ներսէս վրդ. Խապայեանի: Խարտաւիլակի պաշտօնը պիտի կատարէ Տ. Զաւէն Ծ. վրդ.:

Ն. Սրբազնութիւնը կիրակի առաւօտ հանդիսաւոր Պատարագ պիտի մատուցանէ Ս. Երրորդութիւն եկեղեցին և պիտի օրհնէ նոյն եկեղեցւոյ բոլոր բարերարներուն յիշատակը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Երբեմն դերասան ու Թատերագիր Ռօմանոս Սէթեֆճեանի հիւանդագին ու նեղութեան մատնուած անկեալ վիճակը ծանուցուեցաւ վերջին օրերս: Այս առթիւ, հետեւեալ նամակն ստացած ենք.

Բեմական վաղեմի վաստակաւոր Ռօմանոս Սէթեֆճեանի համար բարեխիղճ ազգայնոց կարեկցութեան կոչում կ'ըլլալու ազգ. Թերթերու մէջ և պզտիկ նպաստներ ալ ծանուցուեցան: Յարգելով միշտ այդ նուիրատուութիւնները, կը հարցնենք Արեւելքի միջոցաւ, Թէ կարելի չէ՞ արդեօք որ դերասանապետ Մնակեան էֆ. և իր խումբը իրենց վաղեմի ու անկեալ արուեստակիցին ի նպաստ Թատերական ներկայացում մը տան որմէ գոյանալիք փոքր ի շատէ արդիւնքը պիտի կրնայ սփոփել տարաբախտ Սէթեֆճեանը ու իր բազմակարօտ ընտանիքը:

Ռ. Կ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նամակագրին յայտնած գաղափարը որքան մարդասիրական՝ նոյնքան գործնական կը գտնենք և Մնակեան Թատերախումբին ուշադրութեան կը յանձնենք հրապարակաւ: Բեմական կեանքի մէջ՝ մոռցուած ըլլալու աստիճան հին անուն մըն է Ռօմանոս Սէթեֆճեան որ իր ծեր հասակին, չքաւորութեան ու հիւանդութեան այս օրերուն մէջ, տխուր այժմէութիւն մը կ'առնէ: Եւ սակայն Մնակեան էֆ. ու իր վաղեմի արուեստակիցները կը ճանչնան զայն և կը յիշեն անոր յաջողութեան փայլուն օրերը: Հիմա որ անկողին ինկած է ու յետին ծայր աղքատ, արուեստակցի պարտականութիւն մը պիտի նկատեն անշուշտ՝ իրենց Թատերական մէկ երեկոյթը անոր օգտին նուիրել:

Կը սիրենք յուսալ Թէ յարգելի Թատերապետը համակիր ընդունելութիւն մը պիտի ընէ այս գաղափարին, վստահ ըլլալով որ Բերայի Թատերասէր հասարակութիւնը որ այնքան տաք վերաբերում մը ցոյց տուաւ այս ձմեռ իր ներկայացումներուն, նոյնպէս տաք վերաբերում մը չպիտի ունենայ այս մարդասիրական նպատակով սարքելի Թատերական միակ երեկոյթի մըն ալ:

“ԱՂՔԱՏԱՍԷՐ„ԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

«Աղքատասէր» Տիկնանց պարահանդէսը անակնկալուած փայլուն յաջողութիւնը ունեցաւ, և գերազանցեց իսկ, եղանակին բարեգործական երեկոյթներուն չքնաղագոյնը հանդիսանալով, որուն նպաստած էին՝ որչափ անոր կրթասիրական ու աղքատասիրական նպատակը և հանրութեան համակիր վերաբերումը՝ նոյնքան նաև անոր կազմակերպիչ մարմնին, Տիկնանց Մասնախումբին նուիրած եռանդուն ջանքերն ու ճաշակաւոր նախապատրաստութիւնները: Օրերէ ի վեր արդէն, Բերայի հայ ու եւրոպական բարձր դասի ընտանիքներու շրջանակին մէջ ուշադրութիւնները սեւեռուած էին այս պարահանդէսին վրայ որոնցմով կը զբաղէին, վերջին ձեռքը տրուելով զգեստներուն, մինչ միւս կողմէ քօթիյոնի կազմածները, յատկապէս Բարիզէն բերուած, գեղեցիկ անակնկալներ կը պատրաստէին պարողներուն և պարուհիներուն:

Բերա-Բէլէսի ընդարձակ սրահը՝ պարասրահի վերածուած՝ լոյսերու մէջ կը շողար շաբաթ գիշեր, կանուխէն, և այդ հոյակապ պանդոկին մուտքի նրբանցքը, ծաղկազարդ գորգերով ծածկուած, հրապուրիչ երեւոյթ մը առած էր: Ժամ 4էն սկսեալ, կառքերը կը հասնէին հետզհետէ, և երկսեռ հանդիսականները կ'ընդունուէին հիւրամեծարներուն կողմէ՝ Տիրան պէյ Կիւմիւշկերտեան, Արտաշէս էֆ. Հիւրմիւզ, Էտուար պէյ Մըրըլը, Էլի էֆ. Գույումճեան, Զարեհ էֆ. Բէքմէզ և Գասպար էֆ. Էլմասեան:

Իսկ ներսը՝ պարասրահին մէջ, տանտիկնոջ շնորհալիութեամբ կը հսկէին ընդունելութեանց ու հանդէսին բարեկարգութեանը վրայ «Աղքատասէր»ին Տիկնանց Մասնախումբի Ատն. անդամուհիները, Տիկնայք՝ Աննաւն պէյ Մըրըլը, Ա. Մըրըլը, Ա. Հաճիպիւր, Ա. Հիւրմիւզ, Արամ պէյ Կէօչէեան, Գ. Սէնապեան, Զ. Բէքմէզեան, Ժ. Էլմասքօ, Ժ. Փէրնանտէզ, Լ. Սէքվիլէն, Կ. Ժէրի, Կ. Գարթալի, կոմսուհի տ'Օմբրոզօ, Մարգրէտ Յակոբեան, Միքայէլ փաշա Փօրթուգալ, Ն. Ներսէս, Պ. Խորասանճեան, Պառոնուհի Է. տը Վանտէօվր, Ս. Համամճեան, Վ. Էսաեան և Տիկին Աստինէ Տ. Կիւմիւշկերտեան (գանձապետուհին):

Պարահանդէսը սկսաւ ժամ 5ին մօտ, և պարերն իրարու յաջորդեցին յարաճուն ոգեւորութեամբ, ընտիր նուագածութեան մը ընկերակցութեամբ: Գեղեցիկ սեռին ճոխ արդուզարդերը, վայելչագեստ Քավալիէններուն աշխարհիկ երեւոյթը, առատ լոյս, ծաղիկ ու գոհար, կնոջական զանազան տիպարներ ներկայացնող գեղեցկութիւններ, զարդարներու միջոցին զոյգերու պտոյտներն ու fօզըրինները, և համախմբումներ ճոխ չքասեղանի մը շուրջը, որ մասնաւոր սրահի մը մէջ հանդիսականներուն տրամադրութեան ներքեւ դրուած էր Տիկնանց Մասնախումբին կողմէ, յետոյ պարերուն վերսկսումը նոր արթարթ ոգեւորութեամբ մը, քօթիյոնը՝ որ պարահանդէսին հրապոյրներուն է՛ն հաճելին ու է՛ն հետաքրքրաշարժը կը կազմէր, և վերջ ի վերջոյ սուբէն որուն մասնակցեցան ներկաներէն շատեր, բատ կամս, ահա ընդհանուր պատկերը շաբաթ գիշերուան պարահանդէսին որմէ դժուարաւ բաժնուեցան երկսեռ հանդիսականները, արշալոյսին մօտ:

Քօթիյոնը վարեցին Օր. Փորթուգալ փաշա, Օր. Աննա Ներսէս, Արամ պէյ Կէօչէօղլու և Պ. Պիքիրիքօ:

Այս պարանցիկ երեկոյթին ընծայած հաճելի ժամանցը նկարագրելու առթիւ, կարեւոր Թերի մը Թողուցած պիտի ըլլայինք եթէ չանդրադառնայինք նաև անոր արտադրած հասոյթին որ յայտնի է Թէ գոհացուցիչ եղած է: Զուտ հասոյթ՝ մօտաւորապէս վեց հարիւր ոսկի, առանց մէջը ըլլալու քօթիյոնի սիրուն առարկաներուն համար ծախսուած 100 ոսկիի չափ գումարը, ինչպէս նաև չքասեղանին ծախսը զոր Տիկնանց Կարգադիր Մասնախումբը իր կողմէ հոգալու ազնուութիւնն ունեցած էր:

Կարելի չըլլալով ներկաներու հոծ բազմութեան բոլորին անունները յիշել մէկիկ, կը շատանանք Թուել անունները երկսեռ հանդիսականներէ ամենէն աւելի ծանօթ անձնաւորութեանց.— Վսեմ. Եուսուֆ Զիա փաշա, Իպրահիմ Հագգը պէյ, Սափա պէյ, Շէֆիգ պէյ Ճէնանի, Խալիտ Խուրշիտ պէյ, Սէմիհ պէյ, Պելճիական դեսպան կոմս տը Տիւտզէլէ իր որդւոյն հետ, Տ. և Տիկին Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Տ. և Տիկին Ռոպէր էֆ. Նազըրեան և Օր. Մէրսէտէս Նազըրեան, Տ. և Տիկին Ալէքօ պէյ Բանճիրի, Տ. և Տիկին Մարգէն Յակոբեան, Տիկին Գ. Շամամճեան խան և Հրանտ, Զարեհ և Նուպար խան Շամամճեան, Սիսակ Ֆէրիտ պէյ և Օր. Պօյաճեան, Տ. և Տիկին Տիրան Կիւմիւշկերտեան, Տ. և Տիկին և Օր. Արմենակ փաշա, Գէորգ էֆ. Թորգոմեան, Տ. և Տիկին Սիմոն Գալպաքըեան, Թումիկ էֆ. Սուրէնեան Տ. և Տիկին Աստուածատուր Հարենց, Տ. և Տիկին Զգօն Խորասանճեան, Տ. և Տիկին Յակոբ Պապեան, Լեւոն էֆ. Յովհաննէսեան, Տ. և Տիկին Գառնիկ Կիւլպէնկեան, Տիկին և Օր. Անանօֆ, Արմենակ պէյ Սագըզ, Արմենակ էֆ. Ինճէեան, Տ. և Տիկին Գր. Փապուճեան, Տիկին Յովսէփ Թօքաթեան, Տ. և Տիկին Կրաֆի էֆ., Տ. և Տիկին ժադ Բաղլաստ, Տ. և Տիկին Է. Իկիազօ, Վահան պէյ Սուրէնեան, Տ. և Տիկին Վ. Էսաեան, Տ. և Տիկին Ֆէլիքս Ռօսօլաֆօ, Տ. և Տիկին Արամ Ճէվահիրճեան, Անտօն էֆ. Փափազեան, Երուանդ էֆ. Եուսուֆեան, Տիկին Տէօվլէթ, Տ. և Տիկ. և Օր. Մըրըլը պէյ, Տիկին և Օր. Շաքի, Զարեհ էֆ. Պէրպէրեան, Սարգիս էֆ. Դնաճեան, Տիկ. և Օր. Սէքվիլէն, Տ. և Տիկ. Լէօփօլ Պախ, Տ. և Տիկին Ֆէլիքս Ռօսօլաֆօ, Տ. և Տիկին Սքանցիանի, Տ. և Տիկին Վիլպէր, Բէրոլեք էֆ. Պագըրկեան-խան, Ժադ պէյ տը Լէօն և ընտանիք, Եանքօ պէյ Եուանիտիս, Ժորժ էֆ. Ջէնկիլլ, Ներսէս էֆ. Նարլեան, Տիկին և Օրիորդ Վ. Գասապեան, Տ. և Տիկին Սիւրմէլեան, Տ. և Տիկին Սէքվիլէն, Տ. և Տիկին Էրամ պէյ, Արտաշէս էֆ. Ֆընտըգլեան, Տ. և Տիկին Մինրան Մուրատեան, Մելիք պէյ Գարաքէհեա, Տ. և Տիկին Օգթաւ Ժիրօ, Տ. և Տիկին Պ. տը Վանտէօվր, Սարգիս պէյ Տիւզ, Տիւսափ փաշա, Գարեգին էֆ. Պօյաճեան, Տ. և Տիկին Կարապետ Խորասանճեան, Պ. Լէոն Զարիֆի, Տ. և Տիկին Կրիքարիս, Պլաք պէյ, Արմենակ էֆ. Կիւլպէնկեան, Մավրօքէնի պէյ, Պ. Տչլեանի, Պետրոս էֆ. Հալաճեան, Պ. Ալպէր Մաթըքովից, կոմս և կոմսուհի Ա. Ալէծօ, Տ. և Տիկին Ժորժ Գարթալի, Տ. և Տիկին և Օր. Արիսթիտի Թուպինի, Տ. և Տիկին Գոստանդին Բալլի, Պ. Ժ. Զարիֆի, Պ. Ալպէր Ռօպիքի, Տ. և Տիկին Ռոպէր Բարտօ, Արամ էֆ. Զուհահեան, Պ. Իլիաս Տ'Անտրիա, Հրանտ և Ներսէս պէյ Նորատունկեան, Զարեհ էֆ. Զօհրապեան, Անտօն էֆ. Ազնաւոր, Պ. Բիէր Վասիլօփուլօ, ևայլն ևայլն:

ՕՐԹԱՔԷՕՅԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Օրթաքէօյի եկեղեցասէրները գրեթէ յուսահատական ջանքեր ի գործ դրին բնական և արուեստական դժուարութեանց յաղթելով օրինակելի նուագահանդէս մը կազմակերպելու համար: Առաջ Բասդըլմայի խումբին արուեստագէտները հրաւիրուած էին, սակայն համբաւաւոր խումբը ձմեռուան սաստկութենէն վնասուելով չկրցաւ երկար ատեն Պոլիս մնալ: Նուագահանդէս կազմակերպողներն ալ անյաջող օդերուն և հաստաչերտ կուտակեալ ձիւներուն պատճառով յետաձգեցին զայն շաբաթ մը: Բասդըլմօ մեկնեցաւ և նուագահանդէսը կազմակերպող Յանձնաժողովին եռանդուն և աչալուրջ անդամները յաջողեցան կարճ միջոցի մէջ այնպիսի մեծ արուեստագիտուհիներ և նշանաւոր արուեստագէտներ բեմ հանել, որպիսիք են Զէրնիցքի քոյրերը, որուն համար անշուշտ ջերմ համակրութեան և շնորհակալութեան արժանի են:

Առաջնակարգ և օրինակելի էր Օրթաքէօյի երեկուան նուագահանդէսը: Արդէն ժամը 8½էն սկսեալ խուռն բազմութիւն մը կը դիմէր Բըզի-Շանի ձմեռնային Թատրոնը, որ ժամը 9ին կատարելապէս լեցուած էր ընտրեալ բազմութեամբ մը: Ամբողջ նուագահանդէսը երկու մասի բաժնուած էր: Տպեալ ծրագրին մէջ աննշան փոփոխութիւններ եղան, իսկ ամբողջութիւնը հիանալի կերպով գործադրուեցաւ: Նուագահանդէսին մասնակցող բոլոր գեղարուեստագէտներէն, որոնք 10 աշխարհահռչակ երգահաններէ բազմապիսի և ճաշակաւոր ընտրութեամբ հատուածներ հրամցուցին, դափնէ պսակը անպայման կերպով կը վայելէ համբաւաւոր և շնորհալի Զէրնիցքի (ո՛չ Զերնիցքա, ինչպէս յայտագրին մէջ) քոյրերուն, մանաւանդ Վէրա Զէրնիցքիին որուն եղական տաղանդը ամէն գովեստէ վեր է:

Նուագահանդէսը սկսաւ Կայսերական Համիտիէ քայլերգով որ յոտնկայս ունկնդրուեցաւ ներկաներէն և ջերմապէս ծափահարուեցաւ: Ա. և Ի. Պրասոն, Բ. Մերսինէ և Ա. Կոլաչընսքի 3 ջութակով և 1 Թաւ-ջութակով հիանալի վարպետութեամբ նուագեցին Կայսերական քայլերգը:

Նոյն գեղարուեստագէտները ապա չափառակեցին Պոհեմիացի մեծ երգահան Ա., Տվորժաքի (ծնեալ 8 սեպտ 1841) quatuor en fa majeurը, որ ունկնդիրները նախ տխուր խորհրդածութեանց կախարդիչ ներդաշնակութեան աշխարհ մը փոխադրեց, և ապա հետզհետէ մոգական զօրութեամբ սիրատանջ տեսարաններու կերպափոխուեցաւ և ի վերջոյ կեանքի բուռն և աղմկալից ծնդագին արտայայտութիւններով աւարտեցաւ:

Տվորժաքին յաջորդեց ֆրանսացի հանճարեղ երգահան Շառլ Քամիլ Սէն-Սանս (ծն. 9 հոկտ. 1835 ի Բարիզ), որուն Տալիլա օփերային, որ առաջին անգամ 1877ին Վայմարի մէջ ներկայացուեցաւ, երկրորդ տեսարանին Տալիլայի սիրատոչոր մեներգը սքանչելի զգացականութեամբ արտաբերեց տաղանդաւոր երգչուհի Օր. Նատեժտա Զէրնիցքի, իր համբաւաւոր քրոջ Օր. Վէրա Զէրնիցքիի դաշնակի ընկերակցութեամբ: Նախ քան միւս կտորներուն նկարագրութեան անցնիլը, աւելորդ չեմ համարիր այս տաղանդաւոր և շնորհալի գեղարուեստուհիները հակիրճ խօսքերով ծանօթացնել երաժշտասէր ընթերցողներուն: Վէրա Զէրնիցքի Պեսարաբիա ծնած է և արդէն 3 տարեկանէն արտակարգ տաղանդի մը նշանները ցուցուցած է: 7 տարեկանին՝ գեղանի մանուկ Վէրա արդէն նուագահանդէսներուն կը մասնակցէր և Չայքովսքիի, Ռուպինշդայնի, Լիսդէի և ուրիշ նման մեծ վարպետներու ուշադրութիւնը հրաւիրեց իր վրայ: Ռուպինշդայնի միջնորդութեամբ Վէրա Վիեննա ղրկուեցաւ և տեղական Քոնսէրվաթուարին մէջ Բրօֆ. Էբշդայնի առաջնորդութեամբ մարզուեցաւ Ալֆրէտ Կրիւնֆէլտի և Թէրէզէ Գարէնոյի հետ: Վէրա Վիեննայէն անցաւ Պէռլին և հոն աւելի կատարելագործեց իր արուեստը: Զէրնիցքի ընտանիքին բոլոր անդամները երաժշտագէտներ են և Վէրա ու Նատեժտա ժառանգած են իրենց հօր տաղանդը: Վէրա ութը տարի առաջ աւարտած է երաժշտական բարձրագոյն դպրոցը և անկէ ետքը մինչեւ ցայսօր 300է աւելի նուագահանդէսներ տուած է Ռուսիոյ գրեթէ բոլոր մեծ քաղաքներուն, Կովկասի, Թուրքեստանի ու Սիպերիոյ և ապա Գերմանիոյ, Աւստրիոյ, Ռումանիոյ, Սերպիոյ և Պուլկարիոյ մէջ: Երկու տաղանդաւոր քոյրերը 1906 օգոստոս 31ին Մարիէնպատի մէջ նուագած են Էտուարդ Է.ի ներկայութեան, նոյն տարուան օգոստոս 13ին Ռումանիոյ արքունիքին մէջ և Վէրա ադամանդազարդ մատանի մը նուէր ստացած է մեծ գեղարուեստագիտուհի Քարմէն Սիլվայէն: Հռչակաւոր երգահան և քննադատ Սեզար Քուի՝ Զէրնիցքի քոյրերուն նուագահանդէսը լսելէն ետքը գրեց. «Հեռու չէ այն ժամանակը, որ ոչ միայն ամբողջ Ռուսիա, այլ ամբողջ երաժշտական աշխարհը հիացմամբ պիտի խօսի Զէրնիցքի քոյրերուն արտակարգ տաղանդին վրայ:»

Հռչակաւոր երաժշտագէտ բրօֆէսօրներ, ինչպէս, օրինակ, Բրօֆ. Հվալեա Բրոսլայի Թերթերուն մէջ մեծ գովեստով խօսած է Վէրայի տաղանդի մասին և իբր դաշնակահար զայն համեմատած է մեծ արուեստագիտուհի Թէրէզէ Գարէնօի հետ: Ջեխ լրագիրներ զայն իրենց անզուգական դաշնակահար Պէօրէնիքի հետ կը բաղդատեն: Բրօֆ. Օթթօ Տօրն, գերմանացի մասնագէտ քննադատը Վիեննայի երաժշտական շաբաթաթերթին մէջ անսահման գովեստներ կը շռայլէ լուրջ գեղարուեստուհիի եղական տաղանդին և անոր արուեստի ինքնայատուկ ըմբռնումին: Մանաւանդ Լիստի, Պախի, Շոփէնի և Ռուպինշդայնի հեղինակութիւնները Վէրա Զէրնիցքի անզուգական վարպետութեամբ կը պատկերացնէ: Անոր քնքուշ մատներուն տակ նոյն իսկ Բըզի-Շանի անճարակ դաշնակը կ'անէծանայ և մարդկային զգացումներ, ու բոլոր երանգները սէր, տխրութիւն, բերկրութիւն, յուսահատութիւն եւայլն ճարտարօրէն կը նկարուին ձայնի դիւթիչ գոյներով: Վէրա Զէրնիցքի նուագելու միջոցին համակ զգացում է, գեղարուեստի երկնային հուրը անոր ամբողջ էութեան մէջ կը Թափանցէ և անխօս դաշնակը անոր սրտին բուռն յուզումներն արտայայտելու անկարող կ'ըլլայ, որքան ալ ան պերճախօս ըլլայ ունկնդիրներուն համար: Այո՛, պէտք է խոստովանիլ որ Վէրա Զէրնիցքի իբր դաշնակահար կին եզական և հազուագիւտ տաղանդ մըն է:

Նատեժտա Զէրնիցքի ձայնի ճոխ կալուած մը ունի և առաջնակարգ ալդիսդին մը ըլլալու համար շատ բան չի պակսիր անոր: Երբ Վէրա Զէրնիցքի Շուպէրդ-Թօզիկի մարշը կը նուագէր, դաշնամուրը յիրաւի անճրկացաւ: Արդէն մեծ գեղարուեստագիտուհին մարմնոյն շարժուածքներէն կարելի էր սեւնել այդ: Վէրայի գլուխ-գործոցը Ռուպինշդայնի, Չէլոթի, Լեզկիոնքայի և Լիստի rapsodie hongroiseի արտաբերութիւնն էր: Երկու գործերն ալ վերին աստիճանի դժուարին են ուղիղ արտայայտելու համար: Վէրա հիանալի ճշդութեամբ արտայայտեց մեծ երգահաններու գործերը և զուարթ մեղեդիներու հեշտահնչիւն հոսանքէ մը ետքը տխրամտագ խորհրդածութեանց մառախուղով մը պատեց Բըզի-Շանին ընդարձակ սրահը, որ ամէն բանի յարմար է բաց ի օփերայէ և նուագահանդէսէ, որովհետեւ երբեք արձագանգ չունի: Ունկնդիրներու բուռն և անվերջ ծափեր և գեղահիւս ծաղիկներու Թանկագին կողով մը յայտնեցին տաղանդաւոր արուեստագիտուհիին որ ինք ներկաներէն ջերմապէս գնահատուած է: Նոյն բախտը վիճակեցաւ Վէրայի փոքր քրոջ Նատեժտային որ ռուսերէն լեզուով երգած Գարմէնով, Ռուպինշդայնի Panderoով և Շուպէրդի Erlkönigով յայտագրին սահմաններէն հլաւ ներկաներու բուռն բաղձանաց համաձայն, որուն պսակը եղաւ փառաւոր ծաղկեկողով մը: Կը յուսանք Թէ ուրիշ անգամ Զէրնիցքի քոյրերը նիւթական աւելի գոհացուցիչ պայմաններով կը հեռանան մայրաքաղաքէս և գոնէ այստեղ ըսելու պէտք չեն ունենար «մենք միայն արուեստ ունինք, իսկ դրամ ո՛չ:»

Օր. Քօհան անծանօթ մը չէ արդէն և քանիցս մասնակցած է այլեւայլ նուագահանդէսներու: Երէկուան նուագահանդէսի Ա. մասին մէջ Օր. Նատեժտային հետ երգեց Անկլինի Տիւէթը (Չայքովսքիի) ռուսերէն (ըստ ծրագրին) պիտի երգուէր Տամ-բիք օփերայի Տուօն: Իբր երաժշտասէր Օր. Քօհան իրեն պատիւ բերող կերպով եղաւ գործէն: Օր. Նատեժտա ձայնի անսպառ պաշար ունի, որուն վրայ անպայման կ'իյնէ Օր. Քօհան հնչիւն ձայն մը ունի, որ երբեմն իր սիրունիկն դէմ կ'ըմբոստանայ:

Օրթաքէօյի նուագահանդէսին ամենէն գեղեցիկ անակնկալներէն մէկն ալ եօթնամեայ Հ. Վայսկերպէրի ջութակահարութիւնն էր: Երեւակայեցէք ձեզ մամէ չհասած լրջադէմ սիրունիկ փոքրիկ մը երկար մազերով, ձեռքն ալ ջութակ և կ'ունենաք վաղահաս տաղանդաւոր մանկիկը, որ Ֆլօրիցել մը պիտի ըլլայ անշուշտ: Պզտիկ ջութակահարը Բօլիաքինի Le Canariն և Բ. մասին մէջ այլ և այլ լեռնային հալծներ նուագեց կատարեալ գիտակցութեամբ և ըմբռնումով և իր ոտքի Թաթիկներու չափատու ուղեկցութեամբ: Պզտիկ արուեստագէտը նախ յուզուած վիճակ մը ունէր: բայց չուշտով ինքզինքը գտաւ և իր ջութակին լարերը հնչեցուց տարէց վարպետի մը վստահութեամբ:

Ա. և Ի. Պրասոն, Սէլվէլլի, Մերսինէ և Կոլաչէնսքի արդէն յայտնի են Կ. Պոլսեցիներուն, և իրենց բաժինները նուագեցին սովորական հմտութեամբ:

Նուագահանդէսի ամբողջ յօրինուածքը շատ բազմապիսի և շատ զբօսեցուցիչ էր. միակ անյարմար կտորը Քօմզաքի զրուցերգն էր, որ արբեցած ուսանողներու կամ սովորական սրճարաններու համար շատ աղէկ է, բայց ո՛չ այսպիսի լուրջ նուագահանդէսի մը համար:

Ինչպէս նուագահանդէսը գեղարուեստական տեսակէտով ընդհանուր առմամբ շատ յաջող անցաւ, կը յուսանք Թէ նիւթական տեսակէտով ալ ան գոհ Թողուցած է զայն կազմակերպողները, որոնց բարեսիրական եռանդը մեծ գովեստի արժանի է: Շնորհաւորելի է մասնաւորապէս Սեպուհ պէյ Մազլում, որուն նախագահութեան և նուիրած անձնուէր ջանքերուն կը պարտինք այս գեղեցիկ նուագահանդէսին վայելքը:

⁂ Նուագահանդէսի սկիզբէն մինչեւ վերջը օրինակելի կանոնաւորութիւն մը տիրեց, երկսեռ հանդիսականները պատշաճ քաղաքավարութեամբ ընդունուեցան հիւրամեծարներուն կողմէ՝ Օննիկ էֆ. Փարամֆիլեան, Հայկ էֆ. Փափազեան, Երուանդ էֆ. Նազըրեան, Սիրունակ էֆ. Աւրապեան, Արամ էֆ. Մրճիկեան և Օննիկ էֆ. Կարիւա:

⁂ Ինչպէս կը լսենք, Զէրնիցքի քոյրերը վաղը պիտի մեկնին մայրաքաղաքէս դէպ ի Եգիպտոս և անկէց Աթէնք, Բարիզ, Լոնտոն և Ամերիկա պիտի ուղեւորին:

⁂ Պզտիկ Վայսկերպէր ի մօտոյ նոր նուագահանդէս մը պիտի տայ:

ՄԱՀԱԶԴ

Տէր և Տիկին Միհրան Շիրինեան, Տէր և Տիկին Համբարձումեան և զաւակունք, Տէր և Տիկին Գառնիկ Սարգիսօֆ, Տէր և Տիկին Նիքօթ Սեղբոսեան, Նասիպ էֆ. Խ. Ճէզվէճեան և զաւակունք, խորին ցաւով կը ծանուցանեն մահը

ԱՍՏԻԿ ԷՖ. ՇԻՐԻՆԵԱՆԻ

(ՈՍԿԵՐԻՉ)

որ երէկ առաւօտ աւանդեց իր հոգին:

Ազգականք և բարեկամք կը հրաւիրուին ներկայ գտնուիլ յուղարկաւորութեան տխուր արարողութեան, որ պիտի կատարուի վաղը՝ երեքշաբթի՝ ժամ 6ին (Ը. Թ.) Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին, ուր արդէն փոխադրուած է հանգուցեալին մարմինը որ անկէ պիտի փոխադրուի տեղւոյն ազգ. գերեզմանատունը:

Սկիւտար, 22 Յունուար 1906

Մահազդ չընդունողներէն կը խնդրուի ներկայս իբր այն նկատել:

Կը խնդրուի՝ ծաղկեպսակ չղրկել:

Սկիւտարի շոգենաւը կամուրջէն կը մեկնի ժամ 4½ին:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 3 փետր.— Անգլիոյ Թագաւորը ու Թագուհին, երէկ, Բարիզ ժամանեցին, ուր ութ օր պիտի մնան: Հետեւորդներն են Կոսֆորտի կոմսուհին, Լէտի Նոլիս, հարիւրապետ Փօրթէսքիւ և հազարապետ Բանսոպի:

—Անգլիոյ Թագաւորը ու Թագուհին բրիտանական դեսպանատան մէջ առանձին ճաշեցին շաբաթ իրիկուն. յետոյ Նուվօ Սիւք գացին: Այս առտու անկլիքան եկեղեցիին մէջ ներկայ գտնուեցան կատարուած արարողութեանց. ապա դեսպանատան մէջ ճաշեցին: Իրիկունը այցելութիւն տուին նախագահ Պ. Ֆալիէռի: Տեսակցութիւնը շատ սիրալիր եղաւ:

ԲԱՐԻԶ.— Բրօֆէսէօր Բօրն Իլլիսթրասիոնի լրագրին համար մեծ փորձեր կատարեց մեծ հեռաւորութենէ լուսանկար առնելու մասին:

—Պէլճիքայի Թագաւորը, որ երեքշաբթի Բարիզէն պիտի անցնի, Էտուարտ Թագաւորին հետ պիտի տեսակցի:

—Արգիլուած ու բանադրուած ամպերիկացի եպիսկոպոս Վիլլաթ ու անոր փոխանորդը՝ Ռուսէն աբբան, որոնք Բարիզի մէջ նոր հիմնուած մը հաստատել կ'ուզեն, այսօր, հակակրական արտայայտութեանց առարկայ եղան, երբ կ'երթային Պարնասիթներու մատուռը, զոր կառավարութիւնը իրենց վարձած է: Վիլլաթ եպիսկոպոսը որ Կոայի մէջ (Հնդկաստան) հիմնուածող եպիսկոպոսի մը կողմէ ձեռնադրուած է, ընկերակցութիւն մը կազմակերպեց, որուն համար կ'ըսէ Թէ ֆրանսական եկեղեցիի մը բոյնը պիտի ըլլայ: Հանրութիւնը այդ մասին չքաջալերեց զայն:

ԼՈՆՏՈՆ.—Կլասկոյի մէջ ուղեղային ու ողնայարի «մէնէնժիթ»ի մեծ համաճարակ մը կը տիրէ:

ՆԻՒ-ԵՈՐՔ.—Երգահանները որոշեցին դատի ենթարկել Թատրոններու «Թրըսթ»ը:

—Հարիսպուրկ քաղաքը մոխիր դարձաւ մեծ հրդեհէ մը:

—Միսիսիպի յորդելով քանդեց Մէմֆիսի քարափները: Բնակիչները փախան մակոյկներով:

ՌԷԳՊԵՐՍՊՈՒՐԿ.— Մէնտելէէվ բրօֆէսէօրը մեռաւ:

— Բնիկ յանձնաժողովը պահանջեց դատաստանի ենթարկել Բորթ-Արթուրի պարտեաները՝ Շթէօսէլ, Ռէյսս և Ֆօք զօրավարները:

ՍՈՖԻԱ.—Հօս երկրաշարժի ցնցումներ զգացուեցան:

ՊԵՐԼԻՆ.—Երէկ կատարուած համեմատական ընտրութիւններէն ընկերվարականները նորէն երեք աթոռ կորսնցուցին. անոնց կորուստը մինչեւ հիմա քսանըհինգ աթոռ է:

ՄԱՏՐԻՏ.— Ձիւնի կոյտերը արգելք կ'ըլլան Սպանիոյ հիւսիսային կողմի երկաթուղիներու անցքին:

ԹՕՔԻՕ.— Քալիֆօրնիոյ գործերուն համար Ճափոնի ու Մ. Նահանգաց միջեւ կատարուած բանակցութիւնները շատ փափուկ են. խիստ դժուարութեամբ կը յառաջանան և անոնց ելքը շատ անորոշ է: Մէկ քանի լրագիրներ նոյն իսկ կ'ըսեն Թէ Ճափոնի կողմէ Ուաշինկթըն ղրկուած վերջին ծանուցագիրը վերջնագիր մըն է, վասն զի Ճափոն իրեն համար նախապատիւ մը կը նկատէ Քալիֆօրնիացիներու ընԹացքը ճափոնցի գործաւորներուն նկատմամբ:

ՀՌՈՄ.— Իտալիոյ Թագաւորը Նէթունոյի մէջ ներկայ գտնուեցաւ Քրուփի նոր Թնդանօթներու փորձին: Ատոնք Իտալիոյ բանակին յատկման ծրագրին մէկ մասը կը կազմեն:

ՊԷՇԹԷ.— Հունգարիոյ հարաւային կողմը միշտ առատ ձիւն կը տեղայ. հաղորդակցութիւնները ընդհատուած են. ելեկտրաշարժ Թրամուէյները դադրած են:

ՄԱՏՐԻՏ.—Զրոյց կայ Թէ Երախուլի բանուեր է, բայց այդ լուրը պաշտօնապէս հաստատուած չէ:

ՎԻԵՆՆԱ.— Բօլիթիշէ Քօրէսբօնտէնց կ'ըսէ Թէ Բարիզի մէջ կատարուած խորհրդակցութեանց ատեն վերջնականապէս տեղի չէ ունեցած Մարոքի պանքային կազմութիւնը, վասն զի Մարոք ներկայացուցիչ չէր ղրկած: Կը յուսացուի որ այդ կազմութիւնը փետրուարի վերջին կէսին տեղի ունենայ:

ՊԵԼԿՐԱՏ.— Սերպ փոխառութիւնը հաւանօրէն փետր. 9ին շրջաբերութեան հանուի Բարիզի և Զուիցերիոյ մէջ հարիւրին 94 գինով:

ԲԱՐԻԶ.— Բարիզի ճափոնական դեսպանը կը յայտարարէ Թէ չափազանցուած են անգլիական լրագիրներուն լուրերը՝ Մ. Նահանգաց ու Ճափոնի միջեւ պատերազմ մը անխուսափելի ըլլալու մասին: Ճափոնի կառավարութիւնը կը յուսայ Թէ վէճը դիւանագիտական ճամբով պիտի կարգադրուի:

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ Յունվար 20/2 Փետրուար

Օսմ. Թոնս. Միացեալ 4 %	Օ. Ո.	105 32
Ամենէն բարձր գին	»	105 34
Ամենէն վար գին	»	105 31
Ռումէլի Երկաթուղի գոց	Ֆր.	152 ½
Ամենէն բարձր գին	»	152 ¾
Ամենէն վար գին	»	152 3/8
Թրամվայ		74 75

ԲԱՑՈՒՄ Յունուար 22/4 Փետրուար

Օսմ. Թոնս. Միացեալ 4 %	Օ. Ո.	105 24
» » » ժամը 7ին	»	105 25
Ռումէլի Երկաթուղի	Ֆր.	152 ¼
» » ժամը 7ին	»	152 1/8
Քարափ Կ. Պոլսոյ	Գ. Կ. »	440 50
Անատ. երկթ. Պարտթ. Ա. սերի	»	519 —
» » Բ. սերի	»	516 —
» » բաժնեթուղթ	Ա. Ո.	18 50
Շիրքէթի Խայրիէ	»	41 50
Շիրքէթի Խայրիէի Համիտիէ	»	5 —
Օսմ. Ապահ. Ընկ.	»	4 90
Օսմ. Ծխախոտ		— —
Թրամուէյ բաժնեթուղթ		11 60
» ժուիսանս		6 80
» պարտաթուղթ		482 —
Թրամվայ	Ֆր.	75 —
Տէրգոսի Ջուրի ընկ.		359 ½
Պոլիս Քարա Այտըն	Ֆ. Կ.	700 —
Միտիլի պանքա	Օ. Ո.	6 25
Սալօնիքի պանքա		175 —
Մերսին Ատանա պրտղթ.	Ֆ. Կ. Ա. Ո.	16 62
Քարասու առանձնաշնորհեալ		121 —
» սովորական		115 ½
» 5 պարտաթուղթ	Ֆ. Կ.	88 —
Քարափ Իզմիրի		596 —
Փոխառ. Հելլենական 5 %		260 —
Հելլենական պարգեւաւոր Թուղթ		435 —
» »	Օ. Ո.	4 08
Լաւրիոմ	Ֆր.	102 50

ՍԹԻՒԼԱՆՑ

Օսմ. Միացեալ 1 օրուան	Օ. Ո.	1 50
» » 8 »		4 50
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	1 —

Փոխ. հրապարակ Օսմ. Պանքայի 6½ %

	Գնում	Վաճառում
Լոնտոն 3 ամիս ղըշ.	110 —	— —
» չէք »	110 —	110 12½
Բարիզ 3 ամիս ֆր.	— —	— —
» չէք »	22 95	22 85
Պերլին մարք	18 65	18 60
Վիեննա քուրոն ֆիօրին	21 93	21 87

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

ԲԱՐԻԶ, 2 Փետրուար

Միացեալ Օսմ. պրտղթ.) բաց.	Ա. Ո.	97 —
) գոց.	»	96 90
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	153 —
Թրամվայ	»	76 50
Օսմ. Կայս. Պանքա	»	696 —
Ռէժիի բաժնեթուղթ	»	457 —
Պոլիս Քարա Այտըն	Ֆ. Կ. »	700 —
Օսմ. մաքսատուն	»	— —
Ֆրանս. Ռանթ 3 %	Ֆ. Կ. »	95 40
Քրէտի Լիոնէ	»	1240 —
Ռուսական 5 %	»	90 82
Իտալական Ռանթ	Ֆ. Կ. »	102 15
Սպանիական արտաքին	Ֆ. Կ. »	94 92
Չէք Լոնտոնի վրայ	»	25 230
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի	»	4 —

ՊԵՐԼԻՆ, 2 Փետրուար

Օսմ. միացեալ		96 10
Ռուսական 4 % 1902	մարք	— —
Ռումէլի երկաթուղի	»	145 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամսուան	»	20 270
Դրամազեղչ	»	7 —

ԻԼԱՆ

(Բօսթա վէ Թէլէկրաֆ Նէզարէթի)

Բօսթա մէրքէզլէրինտէ գուլլանըլմագ իւզրէ մուպայաասը լուզում կէօրիւլէն տէօրթ եիւզ ալթմըշ պէշ ատէտ լամպիք էլ ալաթլէրը մէվգի միւնագասայա օլթըրըլմըշտըն թալիպ օլանլարըն եիւզտէ օն հիսսէ իլէ թէմինաթը նագտիյէ վէ եախօտ Տէրսաատէթ Թիճարէթ Օտասըլա մուգավէլէթ մուհըրլըրլէրինէն մուսատտագ քէֆալէթը գավիէսի համիլէն Թէլէկրաֆ վէ Բօսթա Նէզարէթի մէճլիսը խարճիլինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունըր:

Ֆի 18 քանունըսանի սանէ 322

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ-ՖԵՐԱՅՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դրամագլուխ 130 միլիոն ֆրանք, ամբողջովին վճարուած Պահեստի գումար 36 միլիոն ֆրանքի չափ:

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վճարումները ոսկեդրամ ըլլալու են. Տասն ղրուշէն վար վճարում չընդունուիր։

Վինըր Պանք-Ֆերայն այսօր հարիւրին 3½ տոկոս կը վճարէ 1000 ոսկիէն վար գումարներու համար, իսկ անկէ աւելի գումարներու համար՝ հարիւրին 3։ Սակայն կրնայ տոկոսին սակը իջեցնել կամ աւելցնել, տեղական լրագիրներու միջոցաւ 15 օր առաջ իմաց տալէ յետոյ։

100 ոսկիէն վար գումարները կրնան ետ առնուիլ ամէն ատեն։

100 ոսկիէն վեր գումարները կրնան ետ առնուիլ գրաւորապէս ու կանխաւ ըլլալիք ազդարարութենէ մը յետոյ, հետեւեալ կերպով.

3 օր	100- 150	ոսկի գումարի համար
6 »	151- 200	» » »
10 »	201- 500	» » »
15 »	501-1000	» » »
30 »	1001 և անկէ վեր	» » »

Վինըր Պանք-Ֆերայն իրեն կը վերապահէ պանքան դրամ ունեցողներուն հաշիւը կարգադրել, ուզուած ատեն վճարելով տետրակին պարունակած գումարը։

Վինըր Պանք-Ֆերայն խնայողական գումարը պարունակող տետրակ մը կը յանձնէ անչափահասի անունով, բայց այդ պարագային նշանակուած խնամակալը (վէլի կամ վասի) միայն իրաւունք ունի դրամը քաշելու։

Խնայողական Սնտուկէն զատ՝ Վինըր Պանք-Ֆերայն կը զբաղի նաեւ սեղանաւորական ուրիշ գործառնութիւններով։

ԱԹԷՆՔԻ ՊԱՆՔԱ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ՎՃԱՐՈՒԱԾ

50,000,000 Տրախմի

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ՝ ԱԹԷՆՔ

Մասնաճիւղեր ունի Կ. Պոլիս եւ գրասենեակներ՝ Ղալաթիոյ եւ Պոլսոյ կողմը Լոնտոն, Աղեքսանդրիա, Գահիրէ, Սելանիկ, Իզմիր, Պիրէոն, Բադրաս, Վօլօ, Շիրա, Քալամաթա, Քանէ եւ Քանտիա (Կրետէ)։

Դրամագլուխին և աւանդ ձգուած դրամին ու արժեթուղթերուն արժէքը, Օգոստոս ամսուն, կը հասնի 260,000,000 տրախմիի։

Աթէնքի Պանքան կը զբաղի Պանքայի ամէն տեսակ գործառնութիւններով. փոխառութիւններ կ'ընէ վաճառքներու, արժեթուղթերու վրայ և Եւրոպական Թուրքիոյ վրայ քաշուած փոխանակագիրներ կը զեղչէ։

Աթէնքի Պանքան հաշուընթացներ կը բանայ, չէքեր, վարկագիրներ կը հանէ, հեռագրական հրամանով վճարումներ կը կատարէ Թուրքիոյ գլխաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ։ Սակարանական հրամաններ կը կատարէ, թէ՛ մեր հրապարակին և թէ օտար հրապարակներուն վրայ, յաճախորդներուն շատ նպաստաւոր կերպով։

Շատ փոքր վարձքի մը փոխարէն՝ արժեթուղթեր կը պահէ, աւանդի ձեւով և ուզուած ատենը ետ առնուելու պայմանով։ Ամէն կարգի կտրոններ կը գանձէ և զեղչի գործողութիւններ ալ կը կատարէ։ Աթէնքի Պանքան հանրութեան տրամադրութեան տակ կը դնէ արկղամուրի խորշեր, փոքր վարձքերով։

Աւանդի ճիւղ

Աթէնքի Պանքան իբր աւանդ կ'ընդունի դրամ և արժեթուղթ, սա տոկոսները վճարելով.

Ուղղուած ատեն դրամ քաշելու պայմանաւ	3%
Վեց ամսուան համար	3½%
Մէկ » »	4 —
Երկու » և աւելի	5 —

Աւանդ ձգուած դրամները կը վճարուին այն դրամով որով Պանքան ձգուած են։ Տոկոսները կը վճարուին ամէն տարուան Յունուար 2ին և Յուլիս 1ին։

Մասնաւոր տետրակներ՝ 4% տոկոսով

Աթէնքի Պանքան իր յաճախորդներուն մէջ փոքր դրամատէրեր ունենալով և փափաքելով ամէն դիւրութիւն ընծայել, անոնց տրամադրութեան տակ կը դնէ մասնաւոր աւանդներու տետրակներ, որոնց մէջ կրնան արձանագրել առ առաւելն 100 ոսկիի աւանդ գումար մը։ Այդ դրամը 4% տոկոս կը բերէ և մասնակի վճարումներ կը կատարուին, առնուազն 25 ղրուշ ոսկեդրամ։ 50—27

ՌՕՍԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐ 1881Ի ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ԱՐՏՕՆՈՒԱԾ

Ընկերութեան կեդրոնատեղին, Բեդերսպուրկ

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կը կատարէ ընդդէմ հրդեհի, ամէն տեսակ արկածներու, ճամբորդութեան պատահարներու, երկաթուղիի ու շոգենաւի մէջ, ապրանքներու փոխադրութեան ու նաւերու սառոյցէ խորտակուելուն դէմ։

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10 666 666	ֆր.
Երաշխաւորութեան գումար	154 666 666	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	400.728 000	»
1904 տարուան մէջ գանձուած ապահովագին ու տոկոս	65.224 946	»

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել

Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան Վօյվօտա Ղալաթիա։

Պոլսոյ գործակալութեան, Տիլսիզզատէ խան, Աշըր Էֆէնտի ճատտէսի, Թիւ 26։

Տնօրէն, Կ. Պոլսոյ մասնաճիւղին՝ Ա. ՀԻՐՄԻԿԶ 11 · 50—2

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԵԱԼ՝ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

1892 Օգոստ. 2|14 եւ 320 Սաֆէր 20 թուակիր Ֆէրմանով

Դիմել Ընկերութեան կեդր. գրասենեակը, Ղալաթիա, Նաշըր խան, Հէզա Էն փողոց, Թիւ 14, Քօօբէրաթիվ վաճառատան դիմաց, կամ հետեւեալ հասցէներուն.

Պոլիս, մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի Եէնի Ճամիի հրապարակ։
Պոլիս, Արձանագրութեան գրասենեակ Ընկերութեան, Պաղչէ Գաբու, Թրամուէյի ճամբան, Թ. 40, մաքսատան մօտ։
Պոլիս, Մ. Ի. Սատօք, Շէյխ Իւլ Իսլամ խան, Պահճէ Գաբու Թիւ 10։
Պոլիս, Ապտի պէյ եւ Ընկ., Վէզնէճիլէր փողոց։
Պոլիս, Գ. Ս. Այմէլօղլու, Էմին-Էօնիւ, Պաղչէ Գաբու, Իզմիր փողոց։
Պոլիս, Իհսան պէյ, Իզզէթ փաշա խան։
Գատըգիւղ, Քեամիլ էֆ., չուկայի հրապարակ։
Գատըգիւղ, Մ. Ա. Անդրիա, Մօտա ճատտէսի։
Պէօյիւքտէրէ, Մ. Ա. Տէմարքի։
Բերա, Մասնաճիւղ Օսմ. Կայս. Պանքայի, Մեծ Փողոց
Էրէնգիւղ, Թէօյոկօս Սօմնիտէս, նամականի մօտ։
Շիշլի, Մ. Ի. Ռոսի, Պէօյիւքտէրէ ճատտէսի, Թիւ 137։
Ղալաթիա, Մ. Ա. Բիրժանց, Թիւ 12, Թիւնէլ խան։
Բէնտիք, Բ. Սօմմարիպա։
Մեծ Կղզի, Ըէսուլ էֆ.։
Մաքրիգիւղ, Մ. Ա. Անճէլիտէս, կայարանի հրապարակ։

17 Գործակալութիւնք Օսմ. գլխաւոր քաղաքաց մէջ։ 50—40

Khedivial Mail Line

(Քէտիվիալ Մէյլ Լայն)

Շոգենաւային Ընկերթ.

Շաբաթական ամենն արագ երթեւեկը Պոլսոյ եւ Աղեքսանդրիոյ միջեւ

Օսմանիէ շոգենաւը նաւապետ Կաթէսչի, երկուշաբթի, 4 փետր. 1907 (Ը. Ն.) կէսօրէն ետք ժամը 2ին, Աղեքսանդրիայէն հոս կը ժամանէ իսկ երեքշաբթի 5 փետր. 1907 (Ը. Ն.), կէսօրէ ետքը, ժամ երեքին պիտի մեկնի Աղեքսանդրիա, հանդիպելով Միտիլլի, Իզմիր և Պիրէոն։

Տեղեկութեանց համար դիմել Ընկերութեան կեդրոնատեղին, Ղալաթիա, քարափին վրայ, Մէյմէնէթլի խան, իսկ մասնաճիւղը, Պոլիս, Վալիտէ Սուլթան խան։

ՄՕՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ճամբորդ եւ ապրանք փոխադրող շոգենաւեր

Ա. ԿԱՐԳԻ	Բ. ԿԱՐԳԻ
Սեթի	Նայլօքրիս
Մինէս	Էմէյսիս
Ռամսէս	Պուզիրիս
Քէյպօր	Մօէրիս
Նարպօն	Ֆօյնիք
Նավարին	Ֆարօս
	Թիպս

Քէբրէն շոգենաւը փետրուար 6ին (Ն. Տ.) Սեւ ծովէն Կ. Պոլիս ժամանելով փետրուար 12ին Լիվըրփուլ պիտի ուղեւորի։

Առաջին կարգի շոգենաւերը շատ հանգըստաւէտ են, նաւուն մէջտեղը ընդարձակ սենեակներ ունին, ելեկտրականութեամբ կը լուսաւորուին եւ կին ճամբորդներու համար տեսչուհի ունին։

Երկրորդ կարգի շոգենաւերն ալ սահմանափակ թիւով ճամբորդներ կ'առնեն բայց տեսչուհի չունին։ Ուղեգին

Կ. Պոլսէ Լիվըրփուլ Ա. կարգի գին է 15
» » Բ. » » » 11

Կը խնդրուի վաճառականներէն որ փոխադրութեանց կամ Ղալաթիոյ մաքսը հանելու համար՝ իրենց հրահանգները տան շոգենաւին ժամանումէն 24 ժամ առաջ։

Ամերիկայի եւ Եւրոպայի նաւահանգիստները տանելու համար ապրանքներ կ'ընդունուին։

Դիմել առ Ճ. Վ. ՈՒԻԹՈԼ եւ Ընկ.
Գործակալք
Ուիթօլ խան, Պաղչէ գաբու, Պոլիս
ՃԷՄՍ ՄՕՍ Ընկ.
50—23 31 Ճէմս Սդրիգ, Լիվըր Վ.

ԿԱԶԴՈՒՐԻՉ ԴԵՂԱՀԱՏԵՐ

Կայս. Բժշկական Վարժարանի դարմանագիտութեան ուսուցիչ Տօքթ. Ռէֆի Կազդուրիչ դեղահատեր անուն դեղ մը պատրաստած է, որ Կայս. Բժշկական Վարժարանէն վաւերացուած և ճարտար բժիշկներու գնահատման արժանացած է։ Այս նոր դեղահատերը որոնք ջիղերուն ուժ կուտան, արդէն իսկ գնահատման արժանացած են, շատերու կողմէ փորձուած ըլլալով։ Շատ ազդեցիկ և միեւնոյն ատեն անվնաս դեղ մըն է, որ կրնայ ապահովաբար յանձնարարուիլ ջիղերու տկարութիւն ունեցող հիւանդներուն։ Սոյն դեղահատերու կեդրոնատեղին է Պաղչէ Գաբու Համիտիէ Սէպիլին դիմաց, Սըրք էֆ. Իւթիւճեանի դեղարանը։ Կը գտնուին նաեւ բոլոր դեղարաններու և դեղավաճառատանց մէջ։ Գաւառներէ եղած յանձնարարութիւնները փութով կը կատարուին։ Սոյն դեղահատերը ջերմագին կերպով կը յանձնարարենք մեր ընթերցողներուն։ 8—1

ՕՍՄ. ԿԱՅՍ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻԻՆ

Ժամանակացոյց կառախումբ. երթեւեկ.

1906 Սպտ. 14 (Ն. Տ.) ուրբաթ օրէն սկսեալ

ԳՕՆԻԱ—ԷՐԷՅԼԻ—ՊՈՒԼԿՈՒՐԼՈՒԻ ԳԻԾ

ԵՐԹ Կոխմ. 622 Ապր. և ճմբ.

Կայարան		Առաւ.
Գօնիա	մկն.	12 30
Գայլին խան		1 01
Չումրա		1 45
Արըգ Էօրէն		2 13
Մանտասուն		2 42
Գարաման	ժմն.	3 13
	մկն.	3 28
Սիարօվա		3 54
Այրանճը-Տէրպէնտ		4 44
Ալաճա		5 20
Էրէյլի	ժմն.	5 45
	մկն.	6 05
Պուլկուրլու ժմն.	իրիկ.	6 20

ԴԱՐՁ Կոխմբ. 621 Ապր. և ճմբ.

Կայարան		իրիկ.
Պուլկուրլու	մկն.	6 35
Էրէյլի	ժմն.	6 53
	մկն.	8 50
Ալաճա		9 17
Այրանճը-Տէրպէնտ		10 0'
Սիարօվա		10 43
Գարաման	ժմն.	11 07
	մկն.	11 22
Մանտասուն		11 55
Արըգ Էօրէն		12 24
Չումրա		1 —
Գայլին խան		1 36
Գօնիա ժմն.	իրիկ.	2 05

50—24

ՍԻՆԿԸՐ

ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

THE SINGER MANUFACTURING Cie.

Սինկէրի կարի մեքենաները զուտ անգլ. պողպատէ շինուած ըլլալով, իրենց տոկունութեամբ այնքան գնահատուած են, որ աշխարհիս ամէն կողմը տարածուած են և բոլոր ընտանիքները, դերձակներն ու կօշկակարները լոկ Սինկէրի մեքենայ սկսած են գործածել։ Սինկէր Ընկերութիւնը ցարդ 490է աւելի պատուոյ վկայական և ոսկեդրամ ստացած է բոլոր ցուցահանդէսներէն։

Մասնաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատուններուն մէջ։

Բերա	1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դիմաց Թիւ 343 և 343 կրկին։ 2. » » Կալաթա Սէրայի դիմաց։
Կալաթա	1. Սինկէր խան Թիւնէլի եաեւ։ 2. Թրամվայի կայարանին դիմաց։
Պոլիս	1. Սուլթան Համամ Թիւ 2։ 2. Սուլթան Պայազիտ, Թրամվայի կայարանին դիմաց Թիւ 13։
Սկիւտար	Չարշը Պոյը, Թիւ 120։

Դասերը և նորոգութիւնները ձրի։ Սինկէր Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս պէյ Տիւզ Օղլուի տունը։ 16 50—46

ԲԱ

ԼՈՒԹՕ նորաձեւ, «Էլմըրէճ», որոնց համար զգեստներ՝ «ֆասօն շիք», տղոց յատուկ զգեստներ՝ «Լուի Ժէ.», որոնց սեւ զգեստներ և ամբէնկ, խիստ ընտիր կերպով պատրաստուած, հագուստներուն նըրբընակազմը մետաքսապատ, բարձրորակ ձեւով անթափանցելի վերարկուներ՝ որոնց և տղոց համար, ժաքէթներ, բալթօներ, քօսթիւմներ, շըլզազգեստներ, քօրսաժներ, շըմիզըթներ՝ կանանց համար, ձեռնակեղէն, շապկեղէն, գլխարկներ, գուլպաներ, մորթենիէ առարկաներ, հովանոցներ, փողկապներ, պըլթէլ, ամերիկեան կօշիկներ՝ «Վոլքովէր», մեր մասնաւոր մաքսալով Տիֆ Սթօն Շու։

Դիմել

Ս. ՏՕՖԱՅԵԱՆԻ

Մեծ վաճառատուններ
Կալաթա եւ Պոլիս

Պօսներ՝ ջըլլամի փետուրներով ու մուշտակներով. — Ամերիկեան դրութեամբ ածելներ՝ իրենց կազմածներով, «Gillette Safety Razor», զարդարուն սանտրներ, մետաքսապատ վաթկայով սենեկազգեստներ։ 12—11

ՁԵՐ ԿՕՇԻԿՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

ՎԻՔԹՕՐ ՊՈՒՐԿԷՆԻԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԷՆ

Բերա, Մեծ Փողոց, Թիւ 376

Բարիզի և Վիեննայի նուրբ կօշիկներ ծախող ամէնէն մեծ վաճառատունն է։ Նաեւ միակ ներկայացուցիչն է Նիւ-Եորքի Հանսան և որդի առեւտրական Տան, որ ամերիկեան կօշիկներ կը պատրաստէ։ Տօնական օրերու և պարահանդէսներու առթիւ մեծ մթերք մը կայ նուրբ ու նորաձեւ կօշիկներու։ 24—11

Cie RUSSE

Navigation à Vapeur et de Commerce

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբաթական երթեւեկութիւններ

Յունուար

Գշ. 23]5	Իզմիր, Պիրէօն, Աղեքսանդրիա, միջօրէէն առաջ ժամը 10ին։ Հաղորդակցութիւն Բոր-Սայիտ ու Սուէզ ու Նաւահանգիստները մեկնող շոգենաւերուն հետ։
Գշ. 23]5	Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Օրտու, Քերասունտ, Տրապիզոն, Րիզէ, Պաթում, միջօրէէն առաջ ժամը 10ին։
Դշ. 24]6	Սէվաստաբոլ ժամը 10ին։
Եշ. 25]7	Օտեսա ժամը 10ին։ Հաղորդակցութիւն Խրիմ-Կովկաս, Խրիմ, Ազով, Օտեսա-Քէրսոն, Օտեսա-Նիքօլայէվ գիծերու շոգենաւերուն հետ։
Եշ. 25]7	Պուրկազ, Վառնա, Օտեսա, իրիկուան ժամը 4ին։
Ուր. 26]8	Տարտանէլ, Միտիլլի, Իզմիր, Քրիտ. Թրիպոլի, Պէյրութ, Եաֆա, Բոր-Սայիտ, Աղեքսանդրիա, իրիկուան ժամը 4ին։
Շբ. 27]9	Օտեսա, իրիկուան ժամը 4ին։

50—5

Արտօնատէր ԶԱՐԵՀ ՆՈՒՍՈՒՖԵԱՆ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ընդմէջ Հըլի, Կ. Պոլսոյ եւ Օտէսայի

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօն	Անուանք	Թօն	Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ալպանօ	1069	Տիտօ	4311	Հիտալկօ	1531	Մարսէլլօ	3709	Սաֆօ	1119
Ալէփօ	3607	Տօմինօ	938	Հինտու	3721	Միքատօ	3557	Տիբր	1735
Անճէլօ	1541	Տուրօ	2383	Հօրաթիօ	1600	Միլօ	1057	Սիլվիօ	119
Արիոսթօ	2277	Տրաքօ	1713	Հումպէր	595	Մոնդէպէլլօ		Սցէբա	1203
Պասանօ	1822	Տինամօ	604	Իակօ	2354	Մուրիլլօ	3419	Թասսօ	1328
Պօրօտինօ	1264	Էլպօ	3464	Իտահօ	5 40	Նէրօ	1333	Թ. Ուիլսըն	1546
Պըֆֆալօ	4481	Էլտօրատօ	1520	Ծինօ	1080	Օթիս	4100	Թօքիօ	3337
Գէյրօ	1871	Էրկօ	841	Քլէսօ	053	Օռացիօ	4036	Թօլէտօ	1470
Գալիփսօ	1837	Ֆիտօ	954	Քոլպինօ	2307	Օրլանտօ	1535	Ուրպինօ	242
Գարլօ	1244	Ֆինլանտ	1828	Քօլօ	1700	Բալէրմօ	1637	Վասքօ	1914
Գաթօ	1094	Ֆլամինկօ	349	Լէօ	1053	Բոլօ	510	Վօլօ	1289
Չիքակօ	2729	Ֆրանչիսքօ	4582	Լէանտրօ	2272	Րիալթօ	3329	Վ. Վիլսըն	239
Սօսէթօ	1831	Կալիլէօ	3060	Լիվօռնօ	1643	Րինալտօ	1553	Եէտօ	1350
Գոլօրատօ	4235	Կիկանօ	1143	Լօրէնցօ	3191	Րօլլօ	613	Ձէտա	1200
Գօնկօ	2905	Կօզօ	1011	Մալմօ	724	Րօմէօ	1789	Թօրօ	
Գօրսօ	895	Կրսանօ	1695	Մարէնկօ	1 73	Րօզարիօ	136	Մայօն	

Ընդհանուր վաճառքով Հըլլէն հոս հասած են.

Բլիօ շոգենաւը, Նաւապետ Արմսթրոնկ։

Բլատօ շոգենաւը, Նաւապետ Պիլտինկ։

Ընդհանուր վաճառքով Հըլլէն հոս կը սպասուին.

Թայկօ շոգենաւը, փետր. 5ին։

Դիմել Գործակալներուն՝ Ֆ. ՀԻԼՏ՝ ԷՆՐԻՔՕՍ

Թիւ 22 24, Քիւչիւք Միլլէթ խան, Ղալաթիա 10 50—2

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐՈՔԵԱՆ ԵՒ ՀԱՅ.

Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ.

ՍՊԱՍՈՒՈՂ ՇՈԳԵՆԱՒԵՐ

փետր. 5ին, Ֆրիժի, Մարսիլիայէն

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

փետր. 6ին, Ֆրիժի, Տրապիզոն և Պաթում։

Ա	կարգ	Բարիզի համար	200	ֆր.
»	»	Մարսիլիոյ »	160	»
Բ	»	Բարիզի »	150	»
»	»	Մարսիլիոյ »	120	»

Տեղեկութեանց համար դիմել Գործակալին՝ Թօփհանէ քարափին վրայ։

15 50—48 Թ. ՌԸԳՕՒԼ

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Ազդ.—Թէմպէքիի Բրիօրիթէ 4% օսմ. փոխառութեան պարտաթուղթերէն ունեցողներուն կը ծանուցուի թէ յառաջիկայ 1907 փետր. 1էն սկսեալ, այդ թուականին պայմանաժամը աւարտած թիւ 28 կտրօններուն, ինչպէս նաեւ յունուար 1/14ին վիճակահանութեան մէջ ամորթիզ եղած պարտաթուղթերը պիտի վճարուին Ղալաթիա, Օսմ. Պանքայի կիչէներուն մէջ։ Այդ կտրօններուն և արժեթուղթերուն փոխարէն, որոնց պէտք է ընկերանան պոռտրօներ, պարտաթուղթի տէրերուն պիտի յանձնուի ընկալագիր մը։ Իր շրջաբերութեան հանուած թուականէն տասն օր յետոյ, այդ ընկալագիրը պարտի ներկայացուիլ Ղալաթիոյ Օսմ. Կայս. Պանքայի արկղին։ 13—4

Կ. Պոլիս, 28 յուն. 1907

ՀԱՆՐ. ՊԱՐՏՔԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ազդ.— Թօղեալ հասոյթներու Ընդ. Տնօրէնութիւնը կը ծանուցանէ թէ Քիոս կղզիին և Քօյուն-Ատայի (Արշիպեղագոս կուսակալութեան մէջ) ձկնորսութեան տուրքը որ նախապէս չորս տարուան համար 268,000 ղրուշի վարձակալութեան տրուած էր, պայմանաժամը մօտերս լրանալուն պատճառաւ, տեղւոյն Հանր. Պարտքի գործակալութիւնը անցեալին պէս աճուրդի դրած է վերոյիշեալ տուրքին վարձակալութիւնը, չորս տարուան պայմանաժամով, սկսեալ 1323 (1907) մարտ 1էն սկսեալ։ Անոնք որ կ'ուզեն Կ. Պոլսոյ մէջ մասնակցիլ այս աճուրդին և տեղեկութիւններ ստանալ վարձակալութեան պայմաններուն վրայ, կրնան Օսմ. Հանր. Պարտքի Վարչութեան ընդհանուր Տնօրէնութեան (ձկնարանի ճիւղ) դիմել։ Անոնք որ կ'ուզեն գոհացնել աճուրդի պայմանները, պարտին հարկ եղած երաշխաւորութիւններն ընծայել։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

8/21 յունուար 1907 (1322) 9—4

«ԱՐԵՒԵԼՔ»Ի ԹԵՐԹՕՆԸ (53)

ԼԻԱՆ-ՆԷՐՕՆ

ԱԴԱՄԱՆԴՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԼԷՆՕՐԻ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՀԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

—Տիկին, ճիշդ Ռօմէնին կը նմանի։ Աստուած վկայ որ անոր դէմքն ունի։ Միեւնոյն աղբիւրէն առնուած ջուրի երկու կաթիլներ այնքան իրարու չպիտի նմանէին որքան այս մինինիկը, բաղդատմամբ իմ երբեմնի դիմագծիս։ Նոյն սեւ աչքերն ունի, փայլուն և քաղցր, նոյն սիրունիկ բերանը... հապա տիկինը ի՞նչ պիտի ըսէ սա աղուորիկ փոսիկին, որ թուշին խոռոչին մէջ կը գտնուի։ Ասկէ աւելի յանկուցիչ փոսիկ մը ո՞ւր կարելի է գտնել, եթէ ոչ զնտանի մը խորը։

Մանօն գոգնոցին մէջ ծածկեց գլուխը, որուն վրայ մուսլինէ գլխարկ մը կար, կարող՝ ամէնէն բուռն յարձակումներուն դիմադրելու։ Բայց ընդհակ սրբեց արցունքները և յոյսի շող մը փայլեցաւ իր գորշ աչքերուն մէջ։

—Թո՛ղ տիկինը ապահով ըլլայ թէ այս անողոք փորձանքը չի կրնար երկար տեւել։ Աստուած այնքան չար չէ։ Մատերնուս հարուածներ կուտայ աջ ու ձախ, երբ թէ անզգոյշ տղաքներ ըլլայինք. և այդ բանը կ'ընէ մեզի յիշեցնելու համար թէ երկիրը չի նմանիր երկինքին։ Յետոյ, քիչ առ քիչ, երջանկութիւնը կը դարձնէ մեզի, զոր ետ առած էր մենէ, առանց գէշ դիտաւորութեան։ Ոնրագիր ներում պիտի խնդրեն այն անմեղ դատապարտեալին, զոր ոճրագործ մը նկատած էին։ Մեր Ռօմէնը մարդասպա՛ն... Ա՜հ, տիկին Մանօն մինչեւ վաղը ձեզի պիտի պատմէ այնպիսի բաներ որոնք կ'ապացուցանեն թէ փոքր հասակէն սկսեալ՝ Ռօմէն հեզահամբոյր, բարի ու վեհանձն եղած է մարդոց և անասուններուն հանդէպ։ Անգամ մը երեւակայեցէք...

Ու անձնուէր սպասուհին պատմութիւնները կ'երկարէին իրարու շղթայուած, մինչեւ որ թէ՛ Տիան և թէ մայրը կ'օրօրուէին այդ պատմուածքներով, գիշերներու երկար տեւողութեան միջոցին։

—Օ՜հ, նորէն պատմէ՛, կ'ըսէր Լէնօր, կէս մը արթնցած։ Մանօն, չես գիտեր թէ խօսքերդ ո՛րքան կը կազդուրեն զիս։ Քանի որ Ռօմէն չուզեր մեռնիլս, քու անձնուիրութեամբ ողջնէ ինծի։ Միայն երկուքնիս կը սիրենք այդ պաշտելի մարտիրոսը։ Լայնածաւալ աշխարհիս վրայ մենք երկուքս կանք, զինքը սիրող։ Այս սոսկալի դատը այնքան աղմուկ հանեց որ եթէ Բրէր կենդանի է ու իմացած, անպատճառ նամակ մը կը գրէ մեզի։ Բրէրի պէս ազնիւ ու գթոտ եղբայր մը մեռած ըլլալու է, որպէս զի օգնութեան չհասնի իր եղբօրը։ Մանօն, ի՞նչ կարծիք ունիս այդ մասին, դուն որ շատ լաւ կը ճանչնաս Բրէրը, հարցուց Լէնօր։

Սպասուհին մեծ խաչ մը հանեց, և գունատած, սա պատասխանը տուաւ.

—Ես ալ տիկնոջն պէս կը կարծեմ։ Երբեք աշխարհի վրայ չեն ապրած Բրէր ու Ռօմէն տը Սէրիսօլի պէս երկու լաւագոյն էակներ։ Ռօմէնի անդրանիկ եղբայրը, Բրէր, եթէ օգնութեան չհասնի, մեռած է ուրեմն։ Բայց չպիտի զարմանամ, եթէ երբեք օրին մէկը, իր ուրուականը երեւան գայ, կիլիոթինի հատու գործիքին տակ մղելու համար ճշմարիտ ոճրագործը։ Ձերինին պէս մայրական զօրաւոր սէր մը կրնայ հրաշքներ գործել, հաւատացէք իմ խօսքիս։

Այդ երկար խօսակցութիւնները շատ չնչին ազդեցութիւն մը կը գործէին Լէնօրի վրայ, մեղմացնելով իր հոգեկան տառապանքը և դեղնուն յոյս մը արծարծելով իր մէջ, պատրաստ՝ շիջանելու։

Մանօն ալ ցաւերու մեղմացում կը զգար այդ խօսքերով։ Ալ ևս մոռցած իր նախկին կանխակալ կարծիքները, զորս ունէր այն կնոջ նկատմամբ, որ երբ տիրուհի կ'իշխէր Սէրիսօլի դղեակին ու դղեկատէրերու սրտին մէջ, հիմա պառաւ սպասուհին կը խոստովանէր Լէնօրի մեծ ձիրքերը և իր առաքինութիւններէն աւելի մեծ սիրով մը կը պաշտէր զանի։

—Ինծի այնպէս կը թուի որ երբեմնի սիրելի տիրուհիս գտած եմ նորէն։ Տիկին Տիան յարութիւն առած է գոգցես, բայց աւելի երիտասարդացած, յանկուցիչ ու գեղանի։ Աստուած շատ բարի է որ Պ. Ռօմէնի դիմաց հանեց իր մօրը չափ կատարեալ կին մը։ Իրաւ որ չէի հաւատար թէ այսպէս պիտի ըլլար...

Օրերը կը յաջորդէին իրարու և Լէնօր լուր չէր առներ մարքիզէն։ Այդ հայրը ի՞նչ սիրտ ունէր որ իր աղջիկը երեսի վրայ ձգած էր այնպիսի՛ ատեն մը երբ սոսկալի դժբախտութեան մը ենթարկուած էր ան։

Ռօմէնի պէս փեսայի մը նկատմամբ անտարբեր գտնուիլ, որուն անմեղութեան կը հաւատար հարկաւ, շատ վատ գործ մըն էր ինքնին։ Բայց ի՞նչ մեկնութիւն տալու էր մարքիզին ընթացքին, որ լքած էր իր միակ զաւակը, փոխանակ համակ անով գրաւուած ըլլալու սիրոյ։

Այս կարծիքը կը յայտնէին դղեակին մօտակայ գիւղին ամէն տուներուն մէջ, բայց ո՛չ ոք կը համարձակէր Լէնօրի զրուցել, անոր վիշտերը չծանրացնելու համար։

Նոյն իսկ Մանօն չէր ուզեր այդ գէշ հօր մասին ակնարկութիւն մը ընել Լէնօրի, թէեւ ներքնապէս անէծքներ տեղար անոր վրայ։

Կէս օրէ մը յետոյ, երբ Լէնօր դարպաստանին մէջ կատարած պտոյտէ մը կը դառնար սպասուհիին ընկերակցութեամբ, որ թեւերուն մէջ առած էր քնացած Տիանը, վիճաբանութեան աղմուկ մը լսեց։

Իսկոյն կանգ առնելով, ականջ դրաւ։

—Բայց ձեզի կ'ըսեմ որ ձեր տիրուհին տեսնել կ'ուզեմ անպատճառ, կ'ըսէր ճաթած ձայն մը։

—Մեր տիրուհին տեսնել կ'ուզէս։ Իրա՞ւ կ'ըսես... Սա լակոտին նայէ որ այդ համարձակութիւնը կ'ունենայ, յարեց դղեակին պարտիզպանը, հայր Ժէրօմ, բարկացած երեւոյթով։ Անպիտան, ինչո՞ւ համար տեսնել կ'ուզես զանի։ Հա՛րկ կայ ըսելու որ քիչ մը դրամ պիտի մուրաս անկէ, իբր փոխարէնութիւն անտառին մէջ հաւաքած անչա՞ն խոտերուդ։ Այնպէս չէ՞։ Անօգուտ բան է տղաս։ Դարպաստանին բացատաները լեցուն են այդ տեսակ ծաղիկներով...

—Օ՜հ, հայր Ժէրօմ, չարութիւն մի՛ ընէր։ Ամէն ոք գիտէ թէ մանկամարդ կինը բարի ըլլալէն զատ գեղանի ալ է։ Արգելք մի՛ ըլլար որ տիկինը կարեկցի խեղճ տղու մը։

Լէնօր արահետ մը դառնալով, դարպասի վանդակապատին եսեւ նշմարեց պատանի մը, որ միւկէններու խուրձ մը կը կրէր կռնակին վրայ։

Արիսթոյի սուր ականջները լսեցին թեթեւ քայլափոխերու ձայնը։ Իր թափանցող աչքերը շուտով ճանչցան գեղանի դղեկատիրուհին։

Հայր Ժէրօմի հետ կատարած բանակցութիւնը դադրեցնելով, որ իր տիրուհին տեսնելուն պէս մէկդի կը քաշուէր, Արիսթօ իր խռուացած մազերէն փունջ մը քաշեց մինչեւ աչքերը։ Ասիկա բարեւն էր։

—Ներողութիւն, տիկին։ Կը հաճի՞ք քանի մը ծաղիկ գնել ինէ, ձեր բարի սովորութեան համաձայն։

Պարտիզպանը ուղիղ ըսած էր։ Գեղեցիկ միւկէնները կը վխտային դղեակին շուրջը, բայց Լէնօր չուզեց որ առանց բան մը տալու ճամբէ այդ տղան, որ իր բարութեան կը հաւատար։

(Շարունակելի)